



ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

**ՈՉ ԵՄ Է ՀԱՅ ԳԻՐԻ,
ԳԱՂԱՓՈՐԻ ՈՒ
ԼԻՆԵԼԻՈՒԹԵԱՆ
ՊԱՇՏՊԱՆ՝ ՀՐԱՆԴ
ԳԱՆԳՐՈՒՄԻՆ**

ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Ս.Դ.Հ.Կ.-եան Կեդրոնի արժանաւոր անդամներ, Ընկեր Տիրան Ակիմեանի (Դամասկոս), եւ Ընկ.Նազարեթ Բշտիկեանի (Ֆրանսա) մահերով բացուած խոցերը տակաւին չսպիացած, ահա՛ համանուն մարմնի երբեմնի վաստակաշատ անդամներէն Ընկ. Հրանդ Գանգրունիի անժամանակ մահուան քօթը... Երկուշաբթի 8 Մայիս 2006, առաւօտեան ժամը 10.00-ին՝ Հրանդ Գանգրունի ոչ եւս կը դառնայ:

Հրանդ Գանգրունիի մահով խոր սուգի կը մատնուի Ս.Դ.Հ.Կ., որ կը կորսնցնէ իր հաւատաւոր, անշեղ ու կորովի գաղափարի տէր ընկեր մը, որ իր կեանքի ամբողջ տեսողութեան, հետեւողականօրէն մնաց պատմէջի վրայ, սկսած՝ շրջանի վարիչ մարմնի երկարամեայ անդամակցութենէն մինչեւ Կեդրոն եւ կեանքին աւարտը:

Իր մահով խոր սուգի կը մատնուի հնչակեան մամուլը. ինչպէս, Պէյրութ լոյս տեսնող Ս.Դ.Հ.Կ.ի օրկան «Արարատ» օրաթերթը (ներկայիս՝ շաբաթաթերթ), գորսկաւ խմբագրել հանրածանօթ հրապարակագիր Արսէն Կիտուրի հետ, համբաւաւոր խմբագիր Ասատուր Էլմանեանի մահէն ետք:

Կ'ողբան իր մահը հաւատաւոր շարքային ու համակիր ընթերցողները Ա.Մ.Ն.-ի մէջ երկար տասնամեակներ լոյս ընծայուած «Երիտասարդ Հայաստան» ամսաթերթի եւ Հարաւային Ամերիկայի շրջանի «Շարժում»-ի, ինչպէս նաեւ եգիպտոսի «Ջահակիր»-ի, որոնց հաւատարիմ սիրակազմերը հանդիսացած է ան տեսալէս: Գանգրունի մշտապէս կը պատգամէր միշտ բարձր ու ամուր պահել մեր կրթական, մշակութային ու մարզական կառոյցները կարենալ պահպանելու համար մեր ազգի գոյութիւնը: Ան հրամայական կը գտնէր հայրենիքի ու Մայր Աթոռ Սրբ. Էջմիածնի շուրջ բոլորուիլը ազգովին գործնալու ու մեր ազգային պատմական ձգտումները նուիրագործելու համար: Ան, ոչ մէկ կերպով կրնար արդարացնել մեր եկեղեցւոյ պառակտումը, որ փաստօրէն կը ջլատէր մեր հաւաքական կամքը:

Շաբ.ը էջ 18

ՏԱՐԲԵՐ ՎԱՐԿԱԾՆԵՐ ՀԱՅՎԱԿԱՆ ՕԴԱՆԱԻ ԱՂԵՏԻ ՇՈՒՐՁ



Նաւերով արկածի վայրը ժամանած գոհերու հարազատները ծաղիկներ կը տարածեն Սեւ Մովու վրայ

Մայիս 3-ին Սեւ Մովու վրայ արկածի ենթարկուած հայկական «Արմաւիա» ընկերութեան պատկանող օդանաւի «սեւ տուփի» եւ գոհուածներու դիակներու որոնողական աշխատանքները կը շարունակուին, սակայն բաւական դանդաղ: Մովու ուժեղ արեւոտեմը իրենց պատճառ դարձած է, որ ուսական սարքերը մատուցին անգործութեան:

Որոնումներու մասնակցելու համար օդանաւի դէպքի վայրը ժամանած են Ֆրանսացիներ իրենց հետ բերելով յատուկ սարքեր, որոնք կ'օգնեն գտնելու օդանաւի անակնկալ կործանման մասին տեղեկութիւններ պարունակող «սեւ տու-

փը»:
Մինչ այդ, հայկական եւ ռուսաստանեան մամուլը կը շարունակեն քննարկել աղէտի կապակցութեամբ տարբեր վարկածները: Կը խօսուի անբարենպաստ եղանակի, օդանաւի անսարքութեան, բաւարար քարիւղ չունենալու, օդաչուի կողմէ սխալ հաշուարկներու, Սոչիի օդանաւակայանի հսկիչներու կողմէ տրուած հակասական ցուցմունքներու եւ այլ ենթադրութիւններու մասին: Եւ քանի որ չկան պաշտօնական տեղեկութիւններ, այս բոլոր վարկածները կը մնան օրակարգի վրայ:

Շաբ.ը էջ 4

ՀԱՅԱՍՏԱՆ «ԱՐԺԱՆԻ» ՉԻ ՆԿԱՏՈՒԻՐ ՄԱՍ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱԿ-Ի ՄԱՐԴԱՅԻՆ ԻՐԱՒԱՆՑ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

Հայաստանի միջազգային հեղինակութիւնը նոր հարուած մը եւս կրեց: Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (ՄԱԿ) գործունէութեան վրայ հսկող Հսկիչ ոչ կառավարական մարմինը Հայաստանը դասեց «սեւ ցանկ»-ի վրայ, աշխարհի 28 երկիրներու շարքին, որոնք արժանի չեն նկատուիլ անդամ դառնալու ՄԱԿ-ի մարդկային իրաւանց խորհուրդին:

Ժընեւի մէջ իր կեդրոնատեղին ունեցող ՄԱԿ-ի Հսկիչ մարմինը յայտարարեց, որ Հայաստանի կառավարութեան ընթացքը՝ մարդկային իրաւանց մարզին ներս, չի տարբերի Ջինաստանի, Քուպայի եւ Սէուտական Արաբիոյ ցուցանիչէն, ուր մարդկային իրաւանց վիճակը «հաւաւոր» կը նկատուի:

Անցեալ Մարտին ՄԱԿ-ի ընդհանուր ժողովը որոշեց ստեղծել Մարդկային իրաւանց խորհուրդ մը, որ պիտի գար փոխարինելու հեղինակազուրկ դարձած նախկին Մարդկային իրաւանց Յանձնաժողովը:

64 երկիրներ ներկայացուցած էին իրենց թեկնածութիւնը՝ մաս կազմելու նորաստեղծ խորհուրդի 47 տեղերուն համար:

Մայիս 9-ի երեկոյեան տեղի ունեցան ընտրութիւնները եւ Հայաստանի թեկնածութիւնը չապահովեց ՄԱԿ-ի անդամ 191 երկիրներէն առնուազն 96-ի ձայները:

Ս.Դ. ՀՆԿԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՑԱԲԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԵՐԸ

Երեւան-Սոչի օդանաւային արկածին առթիւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական վարչութիւնը ցաւակցական գիրեր յղեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ին, ՀՀ Ազգային Ժողովի Նախագահ Արթուր Պաղտասարեանին եւ ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարեանին:

Ցաւակցական գիրերուն մէջ ըստած է.-

Սրտի անհուն վիշտով իմացանք «Արմաւիա» ընկերութեան պատկանող օդանաւի աղէտը: Այս անսպասելի կորուստը ցնցած է գոհուածներու հարազատները եւ համայն հայութիւնը:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական վարչութիւնը իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ Ձեզի, գոհուածներու ընտանիքներուն ու հարազատներուն մաղթելով, որ նոյնօրինակ աղէտներ խնայուին մեր ժողովուրդին ու Հայրենիքին:

Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական վարչութիւն

ՄԱՐ՝ ԸՆԿ. ՀՐԱՆԴ ԳԱՆԳՐՈՒՄԻ

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական վարչութիւնը խոր վիշտով կը գուժէ մահը Կեդրոնական վարչութեան նախկին անդամ, Կուսակցական երկարամեայ գործիչ, պատմաբան, բազմաթիւ գիրքերու հեղինակ, ուսուցիչ եւ տնօրէն՝

ԸՆԿ. ՀՐԱՆԴ ԳԱՆԳՐՈՒՄԻ

որ պատահեցաւ Երկուշաբթի, Մայիս 8, 2006 Պէյրութի մէջ, 81 տարեկան հասակին:

Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական վարչութիւն

**ՓԱՌԱՇՈՒՔ
ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՄԲ
ՆՇՈՒԵՑԱԲ
Հ.Բ.Ը.Ս.Ի
ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 100-
ԱՍԵԱԿԸ
Կարդալ էջ 8**

ԱՆԳԱՐԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԲՈՐ ԵՏ ԿԱՆՉԱԾ Է ՖՐԱՆՍԱՅԻ ԵՒ ԳԱՆԱՏԱՅԻ ԻՐ ԴԵՍՊՈՒՆՆԵՐԸ

Խորհրդակցութիւններ ունենալու նպատակով Թուրքիա ժամանակաւորապէս ետ կանչած է Ֆրանսայի եւ Գանատայի մօտ իր դեսպանները՝ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման հարցի շուրջ խորհրդակցելու համար:

«Փարիզի եւ Օթտուայի մեր դեսպանները կարճ ժամանակով կանչուած են Անգարա: Անոնք կը շարունակեն կատարել իրենց պարտականութիւնները խորհրդակցութիւններէն չետոյց», ըստած է Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան Մայիս 8-ին տարածած յայտարարութեան մէջ:

Այս առթիւ «Ֆրանսիրես» գործակալութիւնը կը լիչեցնէ, որ անցեալ շաբաթ Թուրքիա զուշացուցած էր Ֆրանսային, որ երկու երկրներու միջեւ յարաբերութիւն-

Շաբ.ը էջ 4

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՄԵՐ ՕՐԵՐԻ ՕՂԱՅԵՆՆԵՐԸ

Մայիսի 3-ին տեղի ունեցած ողբերգութիւնը եւս մէկ անգամ ստիպել է մեզ մտածել, իսկ արդեօ՞ք պատահական բնոյթ է կրել աւերակները: Արդեօ՞ք դա ամպրոպ էր բաց երկնքի տակ: Թէ՞, այնուամենայնիւ, սա տրամաբանական աւարտը կամ, Աստուած մի արագեղ, շարունակութիւնն է մի գործընթացի, որի ականատեսն ենք արդէն մի քանի տարի շարունակ:

Այո, աւելի հաւանական է, որ A-320 օդանաւի աղէտը անխուսափելի էր, քանզի այդ ոլորտի պատասխանատուները այնպիսի մարդիկ են, որ դրանցից միայն աղէտ կարելի է սպասել: Ահա եւ մենք որոշել ենք եւս մէկ անգամ յիշեցնել, թէ ինչպէս են այսօրուայ «Արմաւիայի» սեփականատէրերը ժամանակին ձեռնարկել եւ յաջողութեամբ աւարտել երբեմնի ծաղկուն Հայկական աւիաուղիների փոշիացումն ու իւրացումը, ինչն արդէն իսկ աղէտ էր: Նոյնիսկ մակերեսային ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, թէ ինչպէս, ինչ մեխանիզմով է Քոչարեանի օրօք առաւել եւս Հայաստանի նման աշխարհագրական դիրք ունեցող պետութեան համար բացառիկ կարեւորութիւն ունեցող այս ոլորտը փոշիացուել՝ պետութեանը պատճառելով տասնեակ միլիոնաւոր տոլարների վնաս:

Դեռեւս 1993թ. Սեպտեմբերին կառավարութեան որոշմամբ քաղաքացիական աւիացիայում ստեղծուել է ՀՀ կառավարութեան լիազօր ներկայացուցչի ինստիտուտը, որի հիմնական խնդիրը պէտք է լինէր օդանաւակայաններում տարբեր գերատեսչութիւնների ստորաբաժանումների գործունէութեան կողմնակցումն ու կարգուկանոնի հաստատումն: Իրավիճակը շուկայում համար Հայկական աւիացիայի գլխաւոր վարչութեան կոլեգիայի նիստում ընդունուել է աւիացիայի զարգացման ծրագիր, որն էլ 1994թ. Փետրուարին կառավարութեան կողմից հաւանութեան է արժանացել: Այդ ծրագրով նախատեսուել էր աւիացիայի ոլորտը համապատասխանեցնել միջազգային նորմերին եւ ամենակարեւորը՝ մրցակցային շուկայ ձեւաւորել:

Նախ, ապապետականացուել է տոմսերի վաճառքը: Միանգամից առաջ անցնելով ասենք, որ Սոչիի մօտ վթարի ենթարկուած 170 տեղանոց ինքնաթիռում 105 ուղեւոր է եղել, մինչդեռ դեռ շատ շատերը չեն կարողացել այդ չուկերի տոմս ձարել՝ դրանց սպառուած լինելու պատճառով: Այսօր արդէն իր գնով տոմս ձարելը Հայաստանում անհնար է. գործում է սպեկուլեանտների մի ամբողջ բանակ:

Բայց մենք շարունակենք թեման. Յաջողորդ վառելիքի ներկրման խնդիրը նոյնպէս լուծուել է մրցակցային դաշտի ստեղծմամբ. ով աւելի էօժան վառելիք էր առաջարկում, նրանից էլ վառելիքը գնում էին:

Տարանջատուել են բոլոր ծառայութիւններն ու սպասարկումները: Իւրաքանչիւրը գրաւուել էր իր գործով՝ փոխադրողը՝ փոխադրումով, սպասարկողը՝ սպասարկմամբ, վաճառողը՝ վաճառքով:

Ահա այսպէս, քայլ առ քայլ բարեփոխումների ծրագիրը իրականացնելով, ընդամենը 3 տարում Հայկական աւիացիան շոշափելի յաջողութիւնների է հասել: 1993թ. Հայկական Աւիաուղիներն (ՀԱՈՒ)

2 մլն տոլար պարտք է ունեցել, 1994թ. պարտքը գրոյացուել է, 1995թ. ՀԱՈՒ-ի մաքուր շահույթը կազմել է 1 մլն դոլար, իսկ 1996թ.՝ 10 մլն դոլար: Ընդ որում, 1996թ. ՀԱՈՒ-ն պետքիւզ է վճարել 25 մլն տոլար շահութահարկ՝ ամենամեծը Հայաստանում:

Ահա այս վիճակում, այսպիսի ցուցանիշներով էլ աւիացիան յանձնուել է արդէն ներկայ իշխանութիւններին, աւելի ստոյգ՝ Ռոբերդ Քոչարեանին, որը 1997թ. նշանակուեց ՀՀ վարչապետ: Նրա վարչապետութեան առաջին իսկ օրերից էլ սկսուել է իրագործուել հայկական աւիացիան իսպառ վերացնելու եւ փոշիացնելու ծրագիրը: Որպէս այդ ծրագրի առաջին քայլ, 1997թ. «Արաքս» աւիաընկերութեան չուկերը յանձնեցին ՀԱՈՒ-ին: Այսինքն, «Արաքսը» բռնի ուժով վերացրեցին: Նոյն յաջողութեամբ վերացուեց նաեւ «Երեւանաւիան»: Ահա այսպէս հայկական աւիացիայում վերացաւ մրցակցութիւնը, եւ ասպարհզում մնաց միայն ՀԱՈՒ-ն:

ՄԱՆԿԱՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ

Նոյնիսկ այն պայմաններում, երբ ՀԱՈՒ-ն աւիացիայի ոլորտում մենաշնորհ էր ձեռք բերել, 1997թ. նրա շահույթը նուազեց եւ դարձաւ 6 մլն տոլար: Դա վերջին տարին էր, երբ ՀԱՈՒ-ն շահույթով էր աշխատում: Յետոյ սկսուել է իսկական մղձաւանջ: 1998թ. ՀԱՈՒ-ն 2 մլն տոլարի վնաս է կրել, 1999թ.՝ 9 մլն, 2000թ.՝ 18 (!) մլն տոլար: Սրանք փաստեր են: Եւ գաւառական քարոզչութիւնը սրանց դէմ անգոր է:

Բայց մինչեւ ՀԱՈՒ-ի վերացումը երկար ճանապարհ կար: Քոչարեանի յաջորդ քայլը եղել է այն, որ 1998թ. Փետրուարից նա ՀԱՈՒ-ից անջատել է օդանաւերի եւ ուղեւորների վերգեւորաց ապասարկման, բորտանդի, օդանաւերի ընթացիկ վերանորոգման եւ այլ օժանդակ ծառայութիւններ եւ դրանք մասնաւորեցման անուան տակ նուիրել է իր հարազատներին: Բորտանդի եւ ուղեւորների սպասարկման ամբողջ բիզնէսը սկսել են իրականացնել «Մուլտի գրուպ» ընկերութեան նախագահ Գազիկ Ծառուկեանը եւ Ռ. Քոչարեանի քրոջ աղջիկը՝ Նաիրա Գրիգորեանը: Թէ ինչ անտղաբաշխական հաւանութիւն էր բերում նրանց այս բիզնէսը, բերենք ընդամենը մի փաստ: Եթէ 1996թ. ինքնաթիռի տոմսի ինքնարժէքի մէջ մտնող սննդի գինը կազմում էր միջինը 5 տոլար, ապա այժմ այն կազմում է 25 տոլար: Այսինքն, միայն սրա հաշուին տոմսի գինը բարձրացել է 20 տոլարով:

Եւ քանի որ ՀԱՈՒ-ն ի վիճակի չէր ամբողջութեամբ վճարել մատակարարուած վառելիքի դիմաց (քանի որ դա շատ թանկ էր), արդիւնքում ՀԱՈՒ-ի պարտքը Միշա Բաղդասարովին սկսել է աւելանալ: Հետագայում, երբ ՀԱՈՒ-ն կը սկսեն մաս-մաս անել, Միշա Բաղդասարովը թաթը կը դնի ՀԱՈՒ-ի իւղոտ պատառների վրայ:

ՀԱՈՒ-ի սնանկացման յաջորդ քայլը եղել է այն, որ նոյն 1998թ. Յուլիսին ՀԱՈՒ-ն վարձակալում է 16 տարուայ հնութեան A-310 օդանաւ, որի համար պէտք է ամսական վճարել 750 հազ. տոլար: Մեր սեղեկութիւններով, այս գործարքը իրականացուել է Քոչարեանի անմիջական ցուցումով: Թէ դա ինչ գործարք էր, բերենք մի փաստ: 1994թ. ՀԱՈՒ-ի ղեկավարութեանը առաջարկել են ձեռք բերել 5 տարուայ A-310 ինքնաթիռ, ամսական 250 հազ. տոլարով, որը 5 տարի շահագործելուց յետոյ կը դառնար ՀԱՈՒ-ի սեփականութիւնը, սակայն հայկական կողմը հրաժարուել է՝ համարելով նման գործարքը աննպատակաւարմար, որպէս՝ ոչ շահաւէտ:

«Զուարթնոցը» տրանզիտ օդանաւակայան դարձնելու դէմագործիկ արտայայտութիւնները հիմնաւորելու նպատակով սկսուել է ՀԱՈՒ-ի սնանկացման մի նոր փուլ, այն է՝ իրականացնել Երեւան-Դելի-Երեւան-Լոնտոն չուկերները: Չուկերները այս երթուղում ոչ միայն մեծ վնաս են հասցրել ՀԱՈՒ-ին (վնասը կազմել է մօտ 6 մլն տոլար), այլ նաեւ յարուցել Մեծ Բրիտանիայի գալրոյթը, քանզի այս չուկերով տեղափոխուել էին մեծ քանակութեամբ ոչ լեգալ էմիգրանտների (Հնդկաստանից, Աֆղանստանից, Պակիստանից, Իրաքից եւ այլն):

ԷՎՈՒՆՈՒՑԻՎ` ԸՍՏ ՕՍԿԱՆԵԱՆԻ

«Ընդհանուր հարեւանութեան ընդհանուր տեսութիւն» խորագրի ներքոյ վերլուսում ընթացող միջազգային համաժողովին Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանեանը, ինչպէս միշտ, հանդէս է եկել մի քանի իւրատիպ դիտարկումներով: Արժէ, թերեւս, քննութեան առնել յատկապէս դրանցից մէկը:

Եւ այսպէս, Լիտվայի մայրաքաղաքում Օսկանեանն ասել է. «Ժողովրդավարութիւնը չլնթացս լուծուող հարց չէ, այն չի հաստատուել մէկ գիշերում: Մենք գիտենք եւ հաւատացած ենք, որ քանի դեռ մենք ճիշդ ուղու վրայ ենք ու վստահ ենք, որ շարժում ենք դէպի առաջ, ապա էվոլյուցիոն եւ վերընթաց մօտեցումը ժողովրդավարութեանը աւելի արդիւնաւէտ է եւ հաստատուն»: Իհարկէ, դժուար է միանգամից ըմբռնել, թէ ինչ է ուղում ասել ՀՀ արտգործնախարարն իր այս բաւական խուճուճ ձեւակերպումներով: Այդուհանդերձ, ենթադրուել է, որ, ըստ Օսկանեանի, Հայաստանը, որը գուցէ ոչ վաղ անցնալու մտքներ է ժողովրդավարական չէր, յամենայնդէպս, ճիշդ ուղու վրայ է, այսինքն՝ գնում է ժողովրդավարացման ճանապարհով: Ի՞նչ կարող է սա նշանակել: Միայն մէկ բան: Ասենք, եթէ 2003թ. նախագահական ընտրութիւնները հիմնաւորապէս կեղծուել են, ապա Օսկանեանի նշած ժողովրդավարացման էվոլյուցիայի տրամաբանութեամբ նոյն թուականին աւելի ուշ կայացած խորհրդարանական ընտրութիւնները պէտք է

աւելի քիչ կեղծուել: Ինչ վերաբերում է 2005 թուականի հանրաքուէին, ապա դրանց արդիւնքները, ի համեմատ նախորդ ընտրական միջոցառումների, այդ նոյն էվոլյուցիայի բերումով գրեթէ անաղարտ պէտք է լինէին...

Դիտարկենք մէկ այլ օրինակ: 2002 թուականին դեռեւս ոչ այնքան ժողովրդավար, սակայն ժողովրդավարացման «ճիշդ ուղու վրայ գտնուող» Հայաստանում գործում էր իշխանութիւններից իրապէս անկախ ընդամենը մէկ հեռուստաընկերութիւն՝ «Ա1+»-ը: Այդ թիւը, սակայն, էվոլյուցիայի ճնշմամբ եւ ընտրուած ուղու ճիշդ լինելու պարտադրանքով պէտք է յաջորդ տարիներին աճէր ու բազմապատկուէր...

Ինչպէս տեսնում ենք, վերը բերուած այս երկու խիստ բնութագրական օրինակների դէպքում էլ իսկապէս գործ ունենք որոշակի էվոլյուցիայի հետ: Միայն թէ դա բոլորովին այն չէ, ինչը փորձել է հարաւորինս խրթին ձեւակերպումներով վերլուսում «ուսեցնել» ՀՀ արտգործնախարարը: Ժիշդ հակառակը՝ դա բացասական նշանով, այսինքն՝ միանգամայն հակառակ ուղեւորութեամբ զարգացող էվոլյուցիա է, որն ինչ-որ կերպ եւրոպացիներին մատուցելու, առաւել եւս դրական լոյսի տակ ներկայացնելու համար թերեւս հարկ է ունենալ Օսկանեանի տաղանդը:

ՏԻԳՐԱՆ ԱԻԵՏԻՍԵԱՆ
«ԱՌԱՒՕՏ» 5-6-06

ցերեկը: Մինչդեռ էւոնէկեանը «Զուարթնոցը» ձեռք բերելուց յետոյ կարգադրել է չուկերների գոյլի մասը թոյլատրել միայն գիշերը, այդպէս փողը շատ է:

Գ. ԱՐԱՄԵԱՆ
«ԶՈՐՐՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

<p>ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹ ԱԹԵՐԹ</p> <p>ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ</p> <p>ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ</p> <p>Արեւմտեան Ամերիկայի Մրջանի ԽՄԵԱԳԻՐ</p> <p>SOPEB. ԱՐՇԱԿ ՉԱՍՆԵԱՆ</p> <p>ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ ԳԱՐԻԷԼ ՄՈՒՆՅԵԱՆ ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ ՎԱԶԳԷՆ ԽՈՏՍՆԵԱՆ ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ Փեռ. (626) 797-7680 Ֆաքս. (626)797- 6863 E-Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com</p> <p>MASSIS Weekly Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 (USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail) Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail). All payments must be made in US funds & Drawn on US banks. Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104</p>
--

ԼՈՒԻԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՓՈԽՆԱԽԱՐԱՐԸ ԿՏՐԱԿԱՆԱՊԷՍ ԴԵՍ Է ԱՏՐՊԵՅՃԱՆԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒՆ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Հայաստանի պաշտպանության փոխնախարար, «Երկրապահ» կամավարականների միության նախագահ Մանուկյան Գրիգորեանը Երկուշաբթի, Մայիս 8-ին կտրականապես դեմ արտայայտուց դարաբաղեան հակամարտության խաղաղ կարգաւորման շրջանակներում Ատրպեյջանին տարածքներ վերադարձնելուն:

«Նման բան չկայ: Ես դա չեմ հասկանում եւ չեմ էլ ընդունում», - լրագրողներին ասաց Գրիգորեանը՝ յաւելելով, որ բացառում է նման հնարաւորութիւնը:

Լրագրողների հարցերին պաշտպանության փոխնախարարը պատասխանեց Եռաբլուրում, ուր ԵԿՄ դեկավարները ու բազմաթիւ անդամներ այսօր՝ Երկրապահի օրը, այցելել էին գոհուած ազատամարտիկների շիրմամերձին:

Մարզահամերգային համալիրում, ուր եռաբլուր այցելութիւնի յետոյ ուղեւորուեցին երկրապահները, Մանուկյան Գրիգորեանը իր ելույթում շնորհաւորեց հաւաքուածներին տօնի կապակցութեամբ՝ նշելով, որ «Երկրապահ»-ը «ինչ արեւ է՝ ձիջդ է արեւ թէ՛ երկրի պաշտպանութեան եւ թէ՛ կառուցման գործում»: Նրա խօսքերով, այսօր պետական սահմանում կանգնած երիտասարդները «մարտունակ են, հզօր են եւ կարող են հայրենիքը պաշտպանել ցանկացած ոտնձգութիւնից»:

Ելույթում փոխնախարարը կրկին անդրադարձաւ տարածքների հարցին. - «Մենք հող տալու բան չունենք: Իսկ եթէ կարողանանք ենք ասել՝ չունենք, ուրեմն պետք է ամէն ինչի պատրաստ լինենք: Իսկ պատրաստ լինելու համար պետք է իրար հասկանանք

«ՕՐԻՆԱԳ ԵՐԿԻՐ»-Ը ԿՈՐՍՆՅՈՒՅ ԵՄ ԵՐԿՈՒ ՊԱՏԳԱՍԱԻՈՐՆԵՐ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Շաբաթ, Մայիս 6-ին Ազգային ժողովի նախագահ Արթուր Բաղդասարեանին «Օրինաց երկիր»-ը ԱԺ-ում ներկայացնող խմբակցութիւնից եւ կուսակցութիւնից դուրս գալու մասին դիմում են ներկայացրել եւս երկու պատգամաւոր՝ գործարարներ Գրիգոր Մարգարեանն ու Ալեքսան Պետրոսեանը:

Գրիգոր Մարգարեանին է պատկանում ռեստորանների «Բելաշո» ցանցը, իսկ Ալեքսան Պետրոսեանը «ՄԱՊ» ընկերութեան խորհրդի նախագահն է. ընկերութիւնը կոնեակի, տոմատի եւ այլ պահածոների արտադրութեամբ է զբաղւում: Ալեքսան Պետրոսեանը խորհրդարանում էր յայտնուել «Օրինաց երկիր»-ի համամասնական ցուցակով, իսկ Գրիգոր Մարգարեանը ընտրուել էր թիւ 13 ընտրատարածքից:

Իսկ նախորդ օրը «Օրինաց երկիր» խմբակցութիւնից եւ «Օրինաց երկիր» կուսակցութիւնից գործարար պատգամաւորներ Արշակ Մխիթարեանի եւ Մելիք Մանուկեանի դուրս գալու մասին յայտնել էր «Օրինաց երկիր» կուսակցութեան լրատուական ծառայութիւնը:

Մելիք Մանուկեանը Հայաստանի գործարարների եւ արդիւնաբերողների միութեան, ինչպէս

ու կողք-կողքի կանգնենք... Չկայ նման բան: Հողը ապրողինն է, ու ամէն մի ազատագրուած թիզ հողի վրայ մի հայտրդու արիւն է թափուել»:

Ելույթ ունեցաւ նաեւ «Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ, ԵԿՄ անդամ Արամ Սարգսեանը՝ նշելով, մասնաւորապէս, որ պատերազմում գոհուած ազատամարտիկները «այսօր ամաչելու բան չունեն».- «Տղերք, վախենամ, մենք ունենանք», - շարունակեց նա: - «Որովհետեւ մենք այս երկրին լաւ տիրութիւն չենք անում: Իսկ տիրոջ իրաւունքը դուք ձեր կենսագրութեամբ էք վատակել: Ու եկել է ժամանակը, որ մենք ինքնեքս մեզ հարց տանք՝ տէ՞ր ենք, թէ՞ ոչ: Որովհետեւ, երբ իրական տէրը տիրութիւն չի անում, տիրութիւն անողներ գտնուում են թէ՛ երկրի ներսում, թէ՛ դրսում: Փորձում են տիրութիւն անել ժողովրդից գողացած փողերով, կեղծ հայրենասիրութեամբ, պոպուլիզմով, օտարին ծառայութիւններ մատուցելով... Ու եթէ մենք տիրութիւն չանենք, այդպէս էլ կը լինի: Բայց ես վստահ եմ, տղերք, ու վստահաբար ձեզ ասում եմ՝ դուք պարտագրուած էք այս երկրին տէր լինելու: Դուք պիտի լինէք տէրը այս երկրի ներկայի ու ապագայի»:

«Ժառանգութիւն» կուսակցութեան նախագահ, Հայաստանի նախկին արտգործնախարար, ԵԿՄ պատուաւոր անդամ Բաֆֆի Յովհաննիսեանը ասաց, թէ կարելի է ոչ միայն այն, որ երկրի սահմանները պաշտպանուեն, այլեւ՝ որ հայը իր հայրենիքում ազատ ապրի. - «Երկիր պահողը պիտի լինի ոչ թէ իշխանի պահող, այլ քաղաքացու, ազատութեան, իրաւունքի պաշտպան»:

Նաեւ Առեւտրաարդիւնաբերական պալատի խորհուրդների անդամ է: Արշակ Մխիթարեանը մինչեւ «Օրինաց երկիր»-ի ցուցակով խորհրդարան ընտրուելը եղել է Կոտայքի մարզի Նոր Գեղի «Աղաւնի» ընկերութեան տնօրէնը:

Որոշ մեկնաբաններ ենթադրում են, որ գործարարների հեռացումը կողմից առկայի մաս կազմող «Օրինաց երկիր»-ից պայմանաւորուած է Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարեանի եւ խորհրդարանի խօսնակ Արթուր Բաղդասարեանի միջեւ վերջերս ծագած տարածայնութիւններով՝ նախագահի վարչակազմը փորձում է փինանսական հիմքից զրկել Արթուր Բաղդասարեանի ղեկավարած «Օրինաց երկիր»-ը:

Անցած ամիս կուսակցութիւնը իր շարքերից հեռացրեց SAS ընկերութեան ղեկավար Արտակ Սարգսեանին, որ, այդուհանդերձ, մտնում է «Օրինաց երկիր» խմբակցութեան անդամ:

Գործարար պատգամաւորների հեռանալուց յետոյ «Օրինաց երկիր» խմբակցութիւնն այժմ ունի 15 անդամ 131 տեղանոց խորհրդարանում: Մեկնաբանների կարծիքով, գործարար պատգամաւորների՝ «Օրինաց երկիր»-ի շարքերը լքելու գործընթացը շարունակուելու է:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՏՐՊԵՅՃԱՆԻՑ ԱԿՆԿԱԼՈՒՄ Է ՄԻԱՅՆ ՃԱՆԱԶԵԼ ԴԱՐԱԲԱՂԻ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏ ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱԻՈՒՆՔԸ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 9 ՄԱՅԻՍԻ, ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆ: Մայիսի 9-ին Հայրենական պատերազմում տարած յաղթանակի եւ Շուշիի ազատագրման տարեդարձի կապակցութեամբ Ստեփանակերտի յուշահամալիրում ծաղկեպսակ են տեղադրել ԼՂՀ նախագահ Արկադի Դուկասեանը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարեանը, ՀՀ պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանը, գլխաւոր դատախազ Աղուն ԅովսէփեանը եւ այլ պաշտօնատար անձինք:

Պատասխանելով լրագրողների հարցերին, ՀՀ պաշտպանութեան նախարարը վստահութեամբ նշել է, որ Ղարաբաղը պատերազմում յաղթել է՝ իր անհամաձայնութիւնը յայտնելով այն արտայայտութեան կապակցութեամբ, թէ յաղթանակը գործի կէսն է եւ դժուարը այն պահպանելն է. «Եթէ 80 տոկոսով ես յաղթում, նշանակում է չես յաղթում, այսինքն մի կարծ ժամանակահատուածում յաջողութեան ես հասնում: Ես կարծում եմ, որ Ղարաբաղը յաղթել է: Իսկ եթէ նոր արհաւիրքներ լինեն, այն ժամանակ կը տեսնենք...», - նշել է նա:

ԽԱԻԻԵՐ ՍՈԼԱՆԱ. «ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑՈՒՄ ՀՆԱՐԱԻՈՐ ԾԵՂՔՄԱՆ ՏԱՐԵՐ ԵՆ ԵԿԱՏՈՒՄ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Եւրամիութեան արտաքին չարաբերութիւնների եւ անվտանգութեան հարցերով գլխաւոր յանձնակատար Խաւիէր Սոլանան կարծիք է յայտնել, թէ Ղարաբաղի հարցում «հնարաւոր ճեղքման տարրեր են նկատուում»:

Ելույթ ունենալով Վիլնիւսում՝ Բալթեան եւ Սեւեռուքեան երկրների ղեկավարների համաժողովում, Սոլանան ասել է. - «Կը ցանկանայի առանձնացնել Լեռնային Ղարաբաղը: Այստեղ մենք հնարաւոր ճեղքման տարրեր ենք տեսնում»:

Խաւիէր Սոլանան ասել է, որ Եւրամիութիւնը պատրաստ է օգնել «սառնեցուած հակամարտութիւնների» կարգաւորմանը. - «Բայց կողմերն օրէնք պետք է պատասխանատուութիւն ստանան եւ հասնեն խնդրի լուծմանը»:

Համաժողովում, որին մասնակցում է ԱՄՆ-ի փոխնախագահ

ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի Լեռնային Ղարաբաղի հարցով զեկուցող Գորան Լենամարկերի՝ նախօրէին յայտնած կարծիքի առնչութեամբ, թէ առանց հոդերի յանձնման խաղաղութիւն չի լինի, նախարարն ասել է. «Շատ տարողունակ բառակապակցութիւն է «հողերի յանձնում»-ը: Ես համոզուած եմ եւ այսօր էլ կրկնում եմ, որ խաղաղութիւնը կամ խնդրի լուծումը պետք է լինի միայն փոխզիջումների հիմքի վրայ, եւ ոչ թէ միակողմանի զիջումների»: Ըստ նրա, Հայաստանը այսօր Ատրպեյջանից ակնկալում է նոյնը, ինչ 18 տարի առաջ. որպէսզի Ատրպեյջանը ձանաչի Ղարաբաղի ժողովուրդի ազատ ապրելու իրաւունքը: «Որեւէ այլ ակնկալիք ես Ատրպեյջանից չունեմ: Մենք չենք ուզում նաւթ կամ որեւէ այլ բան: Պարզապէս ուզում ենք՝ հասկանան, որ Ղարաբաղի ժողովուրդն էլ իրաւունք ունի ապրելու այնպէս, ինչպէս ինքն է ուզում»:

ԻՍՍԵՆԻ ՎԵՐԱԲԱՐՈՒՄ ԵՆ ԵԿԱՏՈՒՄ

Դիկ Չէյնին, այսօր ելույթ է ունեցել Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանեանը:

Խօսելով դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման գործընթացի մասին, նախարարն ընդգծել է, որ «նաւթային պաշարներով եւ նաւթի ներկայիս բարձր գներով առաջնայնական կողմը, դժբախտաբար, եկել է համոզման կամ, առնուազն, հրապարակայնօրէն յայտարարում է, որ ձեռքի տակ ունեն խնդրի ռազմական ճանապարհով լուծման տարբերակ: Նման մտածողութեամբ փոխզիջման գնալը հեշտ չի լինի: Սակայն, Եւրամիութեան եւ միջազգային հանրութեան կողմից նրանց պետք է յստակ ասուի, որ խնդիրը չունի լուծման ռազմական ճանապարհ եւ որ կարգաւորմանը հասնելու համար պետք է արուեն անհրաժեշտ փոխզիջումներ, որոնք Հայաստանն արդէն արել է»:

ԵՐԿՈՂԱՆԸ ՊՈՒՇԻՆ ՀՐԱԻՐԵԼ Է ՊԱՔՈՒ-ԹԲԻԼԻՍԻ-ՋԵՅՅԱՆ ՆԱԻԹԱՏԱՐԻ ԲԱՅՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆԸ

Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանը ԱՄՆ-ի նախագահ ձործ Պուշին հրաւիրել է մասնակցելու Յուլիսի 13-ին կայանալիք Պաքու-Թբիլիսի-Ջէյհան Նաւթատարի բացման արարողութեանը:

Թուրքիական լրատուամիջոցների փոխանցմամբ, հրաւէրը Սպիտակ տուն է ուղարկուել Միացեալ Նահանգների պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսի միջոցով: Ամերիկեան կողմի պատասխանն առաջիմ յայտնի չէ, սակայն նշուած է, որ Ուաշինկթոնը խոստացել է «արարողութեանը ներկայ գտնուել որքան հնարաւոր է բարձր մակարդակով»:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՆԱԽԱԳԱՐՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՀԱՆԴԻՊԵԼ ՅԱՋՈՐԴ ԱՄՍՈՒԱՅ ՍԿՁԲԻՆ»

Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանեան յայտարարել է, որ չաջորդ ամսուայ սկզբին կարող է անցկացուել Հայաստանի եւ Ատրպեյջանի նախագահների հանդիպում: «Վայրի եւ ամսաթիւի վերաբերեալ այս պահին կոնկրետ պայմանաւորութիւններ դեռեւս չկան», - ասել է լրագրողներին արտգործնախարարը, որ այսօր Երեւանում մասնակցել է «Հայաստանը եւ Եւրոպայի խորհուրդը՝ անդամակցութեան հիմք տարի» համաժողովին:

Ինչպէս «Ազատութիւն» ռադիոկայան յայտնեց Հայաստանի նախագահի խօսնակ Վիկտոր Սոլովոյեւանը, երկու նախագահների հանդիպման վայրը եւ ժամկէտը կը յստակեցուեն ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահների՝ տարածաշրջանային այցից յետոյ:

ԼՈՒՐԵՐ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՐԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱԾ ԱՆՑԵԱԼ ՏԱՐԻ ՀԱԲԱՔԵԼ Է 12 ՄԻԼԻՈՆ 700 ՀԱԶԱՐ ՏՈԼԱՐ

«Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի Մայիս 5-ի նիստից առաջ գործադիր տնօրեն Նաիրա Մելքումեանը լրագրողներին ասաց, որ անցեալ տարի «Հայաստան» համահայկական հիմնադրամը հաւաքել է 12 միլիոն 700 հազար դոլար: 2003 թուականին այդ թիւը կազմում էր ընդամենը 5 միլիոն դոլար: Առաջընթացը, Նաիրա Մելքումեանի գնահատականով, ակնյայտ է:



Ամերիկահայ իրաւաբան Մարթ Կիրակոս որ վերջերս նշանակուած է Հիմնադրամի Հոգաբարձուներու Խորհուրդի անդամ

Նա յայտնեց նաեւ, որ այս տարի թեւեթոնը նոյնպէս նուիրուած կը լինի «Արցախի վերածնունդ» եռամեայ ծրագրին:

Մելքումեանը նաեւ ասաց, թէ ինքը վստահ է, որ հայ ժողովուրդը «կարող է աւելի շատ հանգանակել համահայկական խնդիրների լուծման համար»:

«Ես չեմ կարող ասել, որ 12 միլիոն 700 հազարը դա մեր ժողովրդի պոտենցիալն է», - ասաց նա: - «Մենք վստահ ենք, որ շատ աւելի մեծ պոտենցիալ կայ: Ես կարծում եմ, տարեկան մօտ 20 միլիոն, 25 միլիոն՝ դա պէտք է լինի մեզ համար սովորական երեւոյթ»:

Այդուհանդերձ, արդէն հանգանակուած գումարները «Հայաստան» հիմնադրամի գործադիր տնօրենին հիմք են տալիս յայտարարելու, որ հիմնադրամը «վստահութիւն ունի ե՛ւ մեր սփիւռքում, ե՛ւ Հայաստանում»:

Արգենտինահայ համայնքը ներկայացնող Ջորջ Վատպարոնեանի ձեւակերպմամբ, սակայն՝ «ոչ ոք կատարեալ չէ»: Այդուհանդերձ, նրա կարծիքով, հիմնադրամի 10-15 տարուայ աշխատանքի ընթացքում ահռելի առաջընթաց է գրանցուել:

«Մենք կ'ուզէինք, որ աշխատանքի որակը բարելաւուէր», - ցանկութիւն հնչեցրեց Վատպարոնեանը: - «Մենք կարծում ենք, որ շինարարութիւնը այնքան լաւ որակի չէ: Պատճառներից մէկը շինարարական բումն է Հայաստանում եւ Ղարաբաղում: Շինարարական ընկերութիւնները մի փոքր անփոյթ են դարձել եւ այնքան չեն մտահոգուում որակով, որքան հարկին է: Բայց դա կարող է շտկուել»:

Հիմնադրամի աշխատանքում շտկումների անհրաժեշտութիւն է տեսնում նաեւ Գերմանիայի տեղա-

կան մարմնի վարչութեան անդամ Ռուբէն Վասիլեանը՝ շեշտադրելով հիմնականում կատարուող աշխատանքի որակն ու դրա վերահսկողութիւնը:

Իսկ պիւռքահայութեան ներգրաւուածութիւնը բարձրացնելու համար, Վասիլեանի կարծիքով, անհրաժեշտ է, որ «վստահութիւն լինի»: - «Ամենից կարեւոր կէտերից մէկը նա է, որ վստահութիւն լինի: Արտասահմանում կան մարդիկ, որ վստահութիւն չունեն»՝ պսալ թէ ձիշդ պատճառներով: Մենք նաեւ պիտի թափանցիկ լինենք՝ լաւ թէ վատ կէտերը պիտի ասենք եւ ոչ թէ միայն լաւերը ասենք, իսկ վատերը ծածկենք»:

Աւելի լաւատես էր այսօր հիմնադրամի հոգաբարձուների խորհրդում ընդգրկուած յայտնի ամերիկահայ փաստաբան Մարկ Կիրակոսը: Նա վստահ է, որ գնալով աւելանալու է ոչ միայն սփիւռքահայերի, այլեւ ամերիկացիների մասնակցութիւնը թեւեթոնին՝ խոստանալով յաջորդ տարի ներգրաւել հոյակապ տեսարաններ, ում շահերի պաշտպանն է եղել:

Իրականացուած աշխատանքների որակի կապակցութեամբ դժգոհութիւն հնչեցրեց նաեւ Լեոնային Ղարաբաղի նախագահ Արկաղի Ղուկասեանը: - «Մենք պրոբլեմ ունենք աշխատանքների որակի հետ կապուած եւ գտնում ենք, որ հիմնադրամի կողմից պէտք է աւելի խիստ վերահսկողութիւն իրականացուի»:

ՏԱՐԲԵՐ ՎԱՐԿԱԾՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՕՂԱՆԱԻ ԱՂԵՏԻ ՇՈՒՐՁ

Մարումնակուած էջ 1-էն

Այս անորոշութեան կը նպաստէ նաեւ «Արմաւիա» ընկերութեան կողմէ տրուած տեղեկութիւններու մասին յառաջացած կասկածները: Արդարեւ, դէպքն ետք ընկերութիւնը յայտարարեց, թէ կործանուած օդանաւը ամիս մը առաջ Պելճիքայի մէջ ենթարկուած է մանրամասն եւ կատարեալ քննութեան Sabena Technics ընկերութեան կողմէ: Սակայն, նոյն ընկերութեան խօսնակ Քարլա Տանիէլզ «Ազատութիւն» ռատիոկայանի հետ հարցազրոյցի ընթացքին հերքեց այս տեղեկութիւնը, ըսելով թէ վթարի ենթարկուած A320 օդանաւը «երբեք չի եղած Պրիւքսէլ» Sabena Technics-ի մօտ»:

Այս շփոթ կացութեան վրայ աւելցած նաեւ այն, որ օդանաւի արկածէն երկու օր ետք, նոյնինքն Sabena Technics-ի նորոգութիւններու կեդրոնէն ներս պատահած հրդեհի մը պատճառաւ կործանեցան չորս օդանաւեր, որոնցմէ մէկը՝ դարձեալ «Արմաւիա»-ի պատկանող A320 եւ միւսը հայկական մէկ այլ ընկերութեան պատկանող օդանաւեր:

Միւս կողմէ, Երեւան-Սոչի օդանաւին մէջ գոհուածներու ընտանիքներուն Հայաստանի կառավարութիւնը յատկացուցած է իւրաքանչիւրին մօտ 3,3 հազար տոլար: Նախապէս արդէն իսկ յայտարարուած էր որ, ապահովագրական ընկերութիւնը իւրաքանչիւր գոհուածի ընտանիքին պիտի փոխատուէր 20 հազար տոլար:

ՀՀ կառավարութեան կողմէ կը ծրագրուի յուշակոթող մը կառուցել՝ օդանաւի արկածի գոհերու յիշատակին: Նաեւ հաստատուած է դրամատնային հաշիւ՝ յօգուտ ընտանիքներուն նուիրատուութիւններ հաւաքելու նպատակով:

ԻՆՔՆԱԹԻՈՒՆ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ Է, ՈՉ ԹԵ «ՄԱՐՇՐՈՒՏԿԱ»



Մաղիկներու գետնորում գոհուածներու յիշատակին

Բրիւսելի միջազգային օդանաւակայանում այրուած երկու հայկական ինքնաթիռներից մէկը պատկանում էր «Արմաւիային», միւսը՝ «Հայկական միջազգային աւիաուղիներ» ընկերութեանը: Յիշեցնենք, որ այս երկու ընկերութիւններն էլ արհեստականօրէն մասնատուած «Հայկական աւիաուղիների» «բե-

կորներից» են: Իսկ ե՞րբ եւ ինչպէ՞ս է սկսուել «Հայկական աւիաուղիների» մասնատման, անանկացման եւ սեփականաշնորհման՝ լաւ մշակուած օպերացիան: Եւ որտեղի՞ց է յայտնուել Միխայիլ Բաղդասարովը:

Իսկ օպերացիան սկսուել է անմիջապէս այն պահից, երբ Սերժ Սարգսեանը նշանակուել է Ազգային Անվտանգութեան նախարար: Դրանից որոշ ժամանակ անց Հայաստան ներմուծող աւիակերոսինի արդէն լաւ մշակուած մեխանիզմները խիստ կասկածելի հանգամանքներում սկսել են խափանուել)այն ժամանակ կերոսինի տոննան Հայաստան էր մտնում մօտ 300 տոլարով(: Այսինքն՝ կարճ ժամանակով Հայաստանում աւիակերոսինի արհեստական դեֆիցիտ է ստեղծուել: Եւ անմիջապէս Սերժ Սարգսեանի առաջարկով «օգնութեան է հասել» մոսկուայաբնակ գործարար ոմն Միխայիլ Բաղդասարով: Բնականաբար, վառելիքի գինն իսկույն դարձել է 450 դոլար: «Հայկական աւիաուղիներ» ընկերութիւնն, իհարկէ, շատ արագ անանկ է յայտարարուել, մասնատուել եւ մաս-մաս վաճառքի հանուել:

Այնպէս որ, Սերժ Սարգսեանն այսօր ընդամենը փորձում է անձնական ունեցուածքը փրկել:

ԱՆԳԱՐԱՆ ԵՏ ԿԱՆՉԱԾ Է

Մարումնակուած էջ 1-էն
ները կրնան տուժել, եթէ Ֆրանսայի խորհրդարանը ընդունի Հայոց Յեղասպանութիւնը հերքելու համար պատիժ սահմանելու մասին օրէնքը: Եթէ այդ օրինագիծը ընդունուի, ցեղասպանութիւնը հերքողներու համար կը նախատեսուի մինչեւ 5 տարուայ բանտարկութիւն եւ մօտ 57 հազար տոլար տուգանք:

Այս կապակցութեամբ թրքական լրատուական գործակալութիւնը կը հաղորդէ որ, թուրքիոյ խորհրդարանի 4 անդամներ Մայիս 9-ին մեկնած են Փարիզ, որպէսզի համոզեն իրենց ֆրանսացի գործընկերներուն չընդունելու Հայոց Յեղասպանութիւնը հերքելու համար պատիժ սահմանելու մասին օրէնքը:

Ֆրանսայի խորհրդարանը կը ծրագրէ պատիժ սահմանող օրինագիծը քննարկել Մայիս 18-ին:

Թուրքիա նաեւ իր գալըրոյթը արտայայտեց, երբ այս տարուայ Ապրիլին Գանատայի յայտարարութիւն կատարեց Հայոց Յեղասպանութեան վերաբերեալ: Գանատայի Խորհրդարանի գոյգ պալատները ճանաչած են Հայոց Յեղասպանութիւնը:

ԳԵՈՐԳ ԴԱԻԹԵԱՆ ԵՐՐՈՂԱՅԻ ԱԽՈՅԵԱՆ



Հայ ծանրորդ Գեորգ Դաւթեան

23-ամեայ հայ ծանրորդ Գեորգ Դաւթեան 77 կգ քաշային կարգում նուաճել է Եւրոպայի ախոյեանի կոչումը: Պոկում վարժութիւնում Դաւթեանի 3 մօտեցումներն էլ յաջող աւարտ են ունեցել եւ ի վերջոյ նա իր գլխավերելում պահել է 165 կգ, ինչը լաւագոյն արդիւնք է եղել: Հրում վարժութիւնում Գեորգը ցոյց է տուել 195կգ արդիւնք, իսկ երկամարտի 360կգ արդիւնքով արժանացել է ոսկէ մետալի:

Հայ մարզիկը շուրջ 8 կգ-ով գերազանցել է 2-րդ տեղը զբաղեցրած ռուս ծանրորդ Վլադիսլաւ Լուկանինին: Բացի այդ Գեորգ Դաւթեանը 5 կգ-ով գերազանցել է մինչ այդ իր ցոյց տուած լաւագոյն արդիւնքը: 77կգ քաշայինների պայքարում հանդէս է եկել նաեւ Արա Խաչատրեանը, որը սակայն 344կգ արդիւնքով հանգրուանել է ընդամենը 5-րդ տեղում:

Այսպիսով՝ հայ մարզիկները Լեհաստանում ընթացող Եւրոպայի առաջնութիւնում նուաճեցին 3-րդ մետալը: Յիշեցնենք, որ մինչ այս բրոնզէ մետալների էին արժանացել 56կգ Արսէն Թամրազեանը եւ 75կգ Հռիփսիմէ Խուրշուդեանը:

ԱԶԳԱՅԻՆ

ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻԻ

1992 թուականի Մայիսի 8-ին հայկական ջոկատները՝ թիւով 2800 մարդ, գնդապետ Արկադի Տէր-Թադևոսեանի (Կոմանդոս) ղեկավարութեամբ սկսել են Շուշիի ազատագրման ռազմական գործողութիւնը: Շուշիի պահակազորը կազմուած էր 2300 ատրպէճճանական զինուորներից: Պահակազորի հրետանին օգտագործուած էր Ստեփանակերտի եւ շրջակայ գիւղերի հրետակոծութեան համար:



Ազատագրուած Շուշի քաղաքը դիտուած վերէն

Մայիսի 8-ի գիշերուայ 2.30 հայկական կազմաւորումները սկսեցին հրետանային նախապատրաստուած Շոշ եւ Քարին տակ գիւղերից: Այնուհետեւ սկսել է յարձակումը 4 հիմնական՝ Զանհասանի, Կենտրոնական, Շոշի, Լիսագորի եւ 2 օժանդակ՝ Քարին տակի եւ Ղալբալուի ուղղութիւններով: Ատրպէճճանական զօրամասերը փորձուած էին հակահարուած հասցնել: Սակայն գործողութիւնն այնքան զբաղէր էր պատրաստուած, որ հայկական միաւորումներին յաջողուեց ազատագրել քաղաքը, որի դիրքերը շահաւէտ էին թշնամու համար: Նոյն օրուայ երեկոյեան հայկական բանակը մտել է Շուշի: Մայիսի 9-ին ատրպէճճանական պահակազորը ստիպուած է եղել նահանջել դէպի Լաչին: Հայկական միաւորումները միջանցք են բացել խաղաղ բնակչութեան եւ զինուորների համար, որի միջոցով վերջիններս թողել են քաղաքը:

ուել Կանաչ ժամը: Կենտրոնական փողոցը կարգի է բերուել: «Խաչմերուկ» կոչուող մասում բացուել են մի շարք խանութներ: Ձեռնարկութիւններից աշխատում է փոքրիկ գորգագործական ֆաբրիկա եւ բուժական թէյի արտադրամաս: Սակայն անելիքն այնքան շատ է, որ քաղաքի ընդհանուր տեսքի վրայ քիչ բան է նկատուել:

Հիմա Շուշիում մէկ տասնեակին մօտ ստեղծագործական հիմնարկներ են գործում՝ թատրոններ, նուագախմբեր, երգչախմբեր: Այդ ամէնը տեղաւորուած է կիսաքանդուած շինութիւններում: Բազմաբնակ շէնքերում դեռ շատ են չվերանորոգուած բնակարանները: Սակայն ամէն մի բնակարանի պատուհանի վրայ տնային ծաղիկներ են երեւում:

ԻՆՉ ԵՆ ՄՏԱԾՈՒՄ ԱՅՍՈՐ

Շուշիի յաղթանակը կիսատ է, եւ նոյնիսկ որոշակիօրէն թերի: Մայիսի 9-ին Յաղթանակի օրը, Փաստարկ ակումբում այդ անակնկալ տեսակէտն են արտայայտել մարդիկ, ովքեր իրենց Չոկատներով մասնակցել են Շուշիի գրաւմանը՝ «Արցախ» ջոկատի հրամանատար Միքայէլ Ապրեսեանը, ՀԱԲԻ հազարապետ Արմէն Աւետիսեանը, Շուշիի առանձնակի գումարտակի անդամ Արմէն Եղեանը, ԱՍԱԼԱ-ի նախկին անդամ Տիգրան Փաշաբեգեանը, «Արաբօ» ջոկատի հրամանատար Մանուէլ Եղիազարեանը: Նրանք համոզուած են, որ Շուշիի յաղթանակը բարոյական

հաստատում չի ստացել Հայաստանի ներքին կեանքում, եւ յատկապէս իշխանութեան համակարգում: Ազատամարտիկները նկատի ունեն անարդարութիւնը, որ տիրում է երկրում, եւ որի համար նրանք նաեւ իրենց են պատասխանատու համարում:

Արմէն Եղեանը, ով այժմ «Ազատագրուած տարածքների պաշտպանութիւն» հասարակական նախաձեռնութեան անդամ է, յիշեցնում է դեռեւս պատերազմի տարիներին ժողովրդի սպասումները, թէ կամաւորականները կ'իջնեն ճակատից, եւ նաեւ երկրի ներսում արդարութիւն կը հաստատեն:

Արմէն Եղեանը ներողութիւն է խնդրում, որ չկարողացան այդ սպասումն իրականացնել: «Շուշին մենք ատրպէճճանցիներից ազատագրեցինք, որ կարողանանք այն կրկին հայկականացնել: Բայց մենք կարող ենք այսօր ասել, որ Երեւանը դա ազգային քաղաք է, հայկական քաղաք է: Մենք այսօր մեր աղջիկներին է՛ք ենք դարձրել եւ նրանց որպէս այդպիսին ենք նայում, սեղանների վրայ աղջիկ ենք պարացնում: Չէ որ դա թրջութիւն է, չէ որ մենք Շուշին ազատագրել ենք, որ այնտեղ մեր հայկական բարոյականը հաստատենք: Այսինքն այդ իմաստով, ցաւօք սրտի, մենք դեռ Շուշին չենք ազատագրել», ասում է Արմէն Եղեանը:

«Արաբօյի» հրամանատար Մանուէլ Եղիազարեանը ասում է, որ պատերազմից յետոյ, երբ կամաւորականները վերադարձան Երեւան, իսկական նուիրեալներն ան-

միջապէս դուրս մղուեցին, եւ իշխանութեան համակարգ մտան կեղծ հերոսները: «Քաջերն ինքնաբերական դուրս մղուեցին, որովհետեւ սողալու, քծնելու, գործ տալու ընդունակ չէին, որովհետեւ նուիրեալ էին: Ու նրանք սկսեցին կատարի պայքար նուիրեալների վրայ: Ինչի համար: Որովհետեւ մենք գիտէինք ճշմարտութիւնը, որ իրենք պատահական մարդիկ են», ասում է Մանուէլ Եղիազարեանը, ով պատերազմից յետոյ նոյնիսկ բանտարկուեց: «Այսօր արդեն, այդ մարդիկ այնքան են լկտիացել: Եթէ դուք գիտէք, որ մի միութեան ղեկավար էք, գիտէք, որ այդ միութեան տասը անդամներից ութը ձեզ չեն ընդունում, հենց դարձար ղեկավար, բնական է, որ ութին պէտք է հալածես, որովհետեւ նրանք քեզ չեն սիրում», նշում է «Արաբօյի» հրամանատարը: Նա ասում է, որ գիտէ ճշմարտութիւնը բոլորի մասին, բայց չի նշում ոչ մի անուն: Ասում է, որ յետոյ է նշելու, նոյնիսկ ժամկէտով՝ մինչեւ մայիսի 28-ը: «Այ հիմա մարդիկ կան, այսօր յայտարարում եմ բոլորիդ, կը գայ ժամանակը, արդեն նահանջելու տեղ չկայ, պէտք է ասուի: Կան մարդիկ, ուղղակիօրէն հրահանգ էին կատարում, քո գծած օպերացիան տապալելու համար, կարող էր հրատանին չկրակել: Ասի հրետանին չի կրակում, գնդակ քիչ ունենք: Կամ հետեւակին խաբի, յարձակման ուղղութիւնը խաբի: Եղել են մարդիկ, անուն առ անուն, կը գայ ժամանակը եւ բոլորին կ'ասեմ, ով ինչ է եղել: Այսօր այդ մարդիկ գեներալներ են, նրանց մի մասը մեծ պաշտօնեաներ են, բանասարկուներ են», յայտարարում է Մանուէլ Եղիազարեանը:

Նա նշում է, թէ չի վախենում անուններ ասելուց, բայց նաեւ ասում է, որ իր մեղադրանքը ուղղուած չէ ԵԿՄ նախագահ, ՊՆ փոխնախարար Մանուէլ Գրիգորեանին: «Ես չունեմ այն ամուր հիմքը, որի վրայ ես իմ յարձակումը պէտք է կառուցեմ: Չեմ վախենում, ես վախենում եմ, չանկարծ փուշ չզնայ իմ յարձակումը: Պետք է, զինուորը յարձակուելու դէպքում, պարտադիր պէտք է յաղթանակ տանի, այ դրանից եմ ես վախենում, որ յաղթանակ լիակատար չլինի», ասում է Մանուէլ Եղիազարեանը:

Արմէն Եղեանի կարծիքով, Շաք.ը էջ 18

AGBU PASADENA HIGH SCHOOL REGISTRATION FOR 2006-2007 IN PROGRESS High School Prep, 9, 10, 11 Grades FOR INFORMATION, Please call 818.883.5379 www.agbuphs.org CLASSES WILL START September 12, 2006 818.883.5379 www.agbuphs.org ՀԲԸՄ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ 2006-2007 Արձանագրութիւնները կը Շարունակուին Նախապատրաստական, 9, 10, 11 դասարաններու համար Յաւելիալ տեղեկութիւններու համար հեռաձայնել

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԻՏԱԼԻՈՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՀՐԵԱՆ

ՄՈՒՏՔ.

Ըստ երեւոյթին «հին» Եւրոպայի քաղաքակրթութեան եւ քաղաքական հաստեղծութեան օժտուած երկիրները գերծ չեն կացութիւններէ որոնք խոտոր կը համեմատին իրենց դարաւոր իմաստութեան եւ փորձառութեան հետ: Թէեւ պէտք է ընդունիլ որ 20րդ դարու երկու համաշխարհային պատերազմները եւ անոնց ընկերացող ժխտական, մանաւանդ քաղաքական գետնի վրայ, իրադարձութիւնները վատ ազդեցութիւն կ'ունենան անոնց ընդհանուր աշխարհայեացքին եւ մտածելակերպին վրայ: Այդ ազդեցութիւններէն միայն գլխաւոր երկուքին վրայ է թէ ակնարկ մը նետենք, այսինքն Խ. Միութեան ստեղծումը եւ ապա տապալումը, եւ երկրորդ, համաշխարհայեացքի մասնակցութիւնը եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու աշխարհի միակ գերզօր տէրութիւն դառնալու հանգամանքը, ուրեմն այս երկու կարեւոր քաղաքական գործընթացները անխուսափելիօրէն կը ներգործեն Եւրոպայի «հին» քաղաքակրթութեան վրայ, անոնց մօտ ստեղծելով հոսանքներ որոնք միշտ ալ նպաստաւոր չեն իրենց համար:

Այսպէս, վերջին քանի մը տարիներուն, յատկապէս Խ. Միութեան տապալումէն ետք, արեւելեան Եւրոպայի, ներառեալ Գերմանիա, քաղաքական դիմագիծը բոլորովին տարբեր կերպարանք ստացաւ: Գերմանիան էթէ յատկապէս յիշեցինք, պարզապէս անոր համար էր որ երկու գերմանիաներ գոյութիւն ունէին - արեւմտեան եւ արեւելեան, որոնց միացումը բոլորովին նոր կացութիւն մը ստեղծեց:

Ուրեմն, սկսելով Գերմանիայէն, մօտիկ անցեալին տեղի ունեցած ընտրութիւններէն յստակ մեծամասնութիւն մը չգոյացաւ ամուր կառավարութիւն մը ստեղծելու համար, եւ այդ երկրի ընդհանուր քաղաքական դիմագիծը կը տատանի տնտեսական հարցերու նկատմամբ պահանջողական եւ ազատական մօտեցումներու միջեւ: Նաեւ կարեւոր կը հանդիսանայ Ամերիկայի հետ փոխ-յարաբերութեան հարցը: Երկու քաղաքական ղեկավար ղեմքերու - Շրէտլըր եւ այժմու ղեկավար Մըրքըլ - տարբեր մօտեցումներ ունին Ամերիկայի նկատմամբ, Շրէտլըր, զգուշ եւ վերապահ, իսկ Մըրքըլ, աւելի մօտ Ամերիկայի:

Եթէ առնենք Ֆրանսայի պարագան, «հին» Եւրոպայի ամենէն

հին հանրապետութիւններէն մէկը, հոն եւս քաղաքական պղտոր կացութիւն մը կը տիրէ, յատկապէս ներքին ճակատի վրայ, երբ պետութիւնը անկարող է ընկերային իր քաղաքականութիւնը հաւասարակշիւ իսլամ գաղթականներու եւ երիտասարդ սերունդի աշխատանքի բարուք դասաւորման գծով: Յստակ է նաեւ Ֆրանսայի ոչ բարեկամական, նոյնիսկ կարելի է ըսել թշնամական վերաբերմունքը Ամերիկայի նկատմամբ, յատկապէս իրաքեան հարցի կապակցութեամբ:

Ի՞նչ կը վերաբերի Անգլիոյ, բացի կարգ մը արեւելեան Եւրոպայի «նոր» Եւրոպայի կարգ մը երկիրներէն, այս երկիրը ամենէն հաւատարիմ դաշնակիցն է Ամերիկայի, թէ քաղաքական եւ թէ մանաւանդ իրաքեան պատերազմի իր բերած կարեւոր նպաստով:

ԻՏԱԼԻՈՅ ՊԱՐԱԳԱՆ

Կը հասնինք Իտալիա, ուր վերջերս տեղի ունեցան կարեւոր ընտրութիւններ: Հոս ալ, Գերմանիոյ նման, արդիւնքները տակաւին կը սպասեն վերջնական յստակացման: Մէկ կողմէ, կայ Իտալիոյ ամենէն հարուստ մարդուն, Սիլվիո Պերլուքսօի կառավարութիւնը որ անցնող 5-6 տարիներուն երկիրը կը ղեկավարէր, իր ազատական, դրամատիրական եւ փրօ-ամերիկեան քաղաքականութեամբ, իսկ միւս կողմէ, իրեն հակառակորդ ձախակողմեան Ռոմանօ Փրոտի իմբաւորումը, որ կը թուի շահած ըլլալ յիշեալ ընտրութեանց ընթացքին:

Փորձենք քիչ մը աւելի մանրամասն ներկայացնել Իտալիոյ պարագան:

Ընտրութեանց անմիջապէս աւարտին, այն տպաւորութիւնը տրուեցաւ որ Ռոմանօ Փրոտի կեղրոն - ձախ դաշինքը 5 տոկոսով շահած էր ընտրութիւնը, վարչապետ Սիլվիո Պերլուքսօիի աշակողմեան կառավարութեան վրայ: Ուրեմն Իտալական Սենատը եւ Ներկայացուցիչներու Տունը կ'երթային Փրոտիի դաշինքին ձեռքը: Փրոտիի դաշինքի անդամները բաւականին հետաքրքրական խումբ մը կը կազմեն: Կան կանանչները, որոնք միջավայրի հարցերով մտահոգ են, արմատականները, որոնք պահանջողական քաղաքականութիւն մը կը հետապնդեն արտաքին ճակատի վրայ, եւ երեք տեսակ համայնավարները - անոնք որոնք տակաւին հին համայնավարներն են, անոնք որոնք փոխուեցան Պերլիի պատի փլուզուէն ետք, եւ անոնք որոնք ձախակողմեան են առանց համայնավար կոչուելու:



Նորընտիր Վարչապետ Ռոմանօ Փրոտի



Սիլվիո Պերլուքսօի

Պրն. Փրոտի յայտարարեց թէ երկիրը նոր դարաշրջան մը կը մտնէ, եւ կը պատրաստուէր յաղթական տօնակատարութեանց: Այս երազը խանգարուեցաւ, քանի որ Պերլուքսօնի կը պնդէր թէ ընտրութեան արդիւնքները տակաւին վերջնական չեն էթէ պէտք էր սպասել Իտալական գերագոյն ատենին որոշման: Հակառակ այս ձգձգման Պրն. Փրոտի կարողացած էր զարմանալի ժողովրդականութիւն մը հաստատել Իտալացի ընտրողներու մօտ, երեւոյթ մը որ օտար լրագրական գործակալութիւնները, Պերլուքսօնի ազդեցութեան տակ, կը մերժէին ընդունիլ: Ինչ կը վերաբերի այս վերջինին, Իտալիոյ ձախակողմեան շրջանակները շատ աւելի արգահատանքով կը վերաբերին իրենց հանդէպ քան թէ Ամերիկայի ղեմոկրատատ-ձախակողմեանները ձորճ Պուշի հանդէպ: Միեւնոյն ատեն, կը թուի թէ Պերլուքսօնի գոհը պիտի երթայ իր իսկ մտցուցած բարենորոգումներու, Իտալական ընտրական դրութեան մէջ, որ նոր ընտրաշրջաններ եւ թեկնածուներ կը նախատեսէր Իտալական Սենատէն եւ Ներկայացուցիչներու Տունէն ներս:

Մինչ այս տողերը կը գրուին, Իտալիոյ Գերագոյն Ատենան վերջնականապէս յաղթանակը կու տար Պրն. Ռոմանօ Փրոտիին, յաղթանակ գոր տակաւին կը մերժէ ընդունիլ Պրն. Սիլվիո Պերլուքսօնի Իտալիոյ ամենէն հարուստ մարդը:

Ի՞ՆՉ ՊԻՏԻ ՊԱՏԱՀԻ ՀԻՄԱ

Ուրեմն ընտրութեանց արդիւնքը ի նպաստ Պրն. Ռոմանօ Փրոտիին կ'երթայ, որքան ալ մերժուի հինգ տարիներէ ի վեր Իտալիան ղեկավարող աշակողմեան պահանջողական Պերլուքսօնի կողմէ: Պրն. Փրոտի յայտարարեց որ «Իտալիոյ ընտրութիւնները վերջացած են: Իտալացիները այլեւս կասկած չունին մեր յաղթանակին

մասին»: Ցարդ Իտալիան ղեկավարող իմբակցութեան «Քրիստոնեայ ղեմոկրատներ» կուսակցութիւնը, եւ ուրիշներ, շնորհաւերլով հանդերձ Պրն. Փրոտին, կը նախատեսեն թէ իրենց համար դժուար պիտի ըլլայ երկիրը ղեկավարել: Ամէն պարագայի տակ, Փրոտի արդէն լոյսը տեսած էր թունելին ծայրը, եւ սկսած նոր կառավարութեան մը կազմութեան: Ընտրուած նոր Խորհրդարանը պիտի ընտրէ երկրին նոր նախագահը Մայիս 18ին, եւ արդէն որոշ աշխատանքներ կը տարուին որպէսզի Իտալիոյ նախագահ ընտրուի նոյնինքն Սիլվիո Պերլուքսօնի: Ուրեմն գալիք 4-5 տարիներու ընթացքին, Իտալիա պիտի ղեկավարուի կեղրոնձախակողմեան քաղաքագէտներու կողմէ, որոնց ընթացքը կը մնայ, ինչպէս անցեալին, ապագային ալ, աննախատեսելի: Անոնց ընտրական խոստումները հետեւեալներն էին.

- Եւրոպական ձախակողմեաններու նման, պաղ վերաբերմունք Ամերիկայի նկատմամբ:

- Մանձել անհատական նախաձեռնութիւնները:

- Հարկային յաւելեալ տուրքեր դնել հարուստ դասակարգին վրայ:

Պրն. Ռ. Փրոտի, որ եղած էր Եւրոպական յանձնախումբի ղեկավարը, ինք համաձայն է այս փոփոխութեանց, եւ սակայն, ինք ճարպիկ եւ իրապաշտ մէկը ըլլալով, լաւ գիտէ թէ ձախակողմեան այս յայտագրի ամբողջական ընդունում կրնայ զինք քաղաքական անձնասպանութեան առաջնորդել: Յատկապէս հարկային դրութեան հիմնական վերանայում մը կրնայ սուղ արժել իրեն: Եթէ պատահի որ իր նախաձեռնութիւններէն նոյնիսկ մէկը ձախողի Խորհրդարանէն ներս, իր քաղաքական ասպարէզը կրնայ վտանգուիլ: Մանաւանդ արտաքին քաղաքականութեան մէջ, էթէ հե-

Շարք էջ 19



A.B.A. INSURANCE SERVICES
Commercial
Auto
Fire
Life
Health
1975-2005
30th
ANNIVERSARY
E-mail: BMaronian@AOL.com

ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՌԱԺԵՇՏ Է

ԵՐԲԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ԶԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՊԵՏՐՈՍ ԵՒ ՍԻԱՍԱՆԹՕ ՄԱՐՈՆԵԱՆ

818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205
ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"



ՎԱՐԱՆ ՇԱՍԼԵԱՆ Կ'ԱՐԺԱՆԱՆԱՅ ELLIS ISLAND ՇՔԱՆՇԱՆԻՆ

ՍԱՐԳԻՍ ՄԱՃԱՌԵԱՆ

Ellis Island շքանշանը պարգևատրվող NECO-ի (National Ethnic Coalition of Organizations) փոխ ատենապետներէն William Denis Fugasy, յատուկ նամակով մը կ'իմացնէ, թէ յայտնի գործարար, ճարտարաբանական, մարդասէր և բարերար Վահան Շամլեան Մայիս 13-ին, էլիս Այլլանտի Great Hall պատմական սրահին մէջ տեղի ունենալիք մեծ հանդիսութեան ընթացքին պիտի ստանայ՝ ամերիկեան ամենաբարձր գնահատանքը համարուող Ellis Island շքանշանը: Շքանշան մը, որ կը տրուի Ամերիկային և իրենց պատկանած էթնիկ հաւաքականութեան նիւթապէս, բարոյապէս, ընկերային ու մարդկայնական ծառայութիւններով օգտակար եղած անձերուն: Շքանշան մը, որ ճանաչուած և վաւերացուած է ամերիկեան Ծերակոյտին և Գոնկրէսին կողմէ:

Ո՞Վ Է ՎԱՐԱՆ ՇԱՍԼԵԱՆ

1931-ին Լիբանան ծնած Վահան Շամլեանին կենսագրութիւնը, աւելի ճիշդ՝ իր ամերիկեան կեանքի պատմութիւնը ցոյց կու տայ, որ լիուրի արժանի է Ellis Island շքանշանին: Արդարեւ, իր կնոջ Անուշի և աղջկան հետ 1959-ին Գալիֆորնիա ոտք դրած 27 ամեայ համարձակ, խիզախ, ճարպիկ, գործարարի ու առեւտրականի բնածին կարողութեամբ օժտուած, ռիսքէ չվախցող Վահանը, ուրիշ ճար չունէր՝ եթէ ոչ յաջողի:

Այտուհանդերձ, ուրկէ՞ սկսիլ, ինչո՞վ սկսիլ: Սահմանափակ նիւթական վիճակ, գաղթականական դժուարութիւններ, անորոշ ապագայ: Սակայն, Լիբանանի ազգային-կուսակցական կեանքին մէջ թրծուած, շրջապատի և շուկայի խաղերուն մէջ կոփուած Վահանին կամքը տկարութիւն չէր ճանչնար: Յուսահատիլ՝ երբեք: Զէ՞ որ իր ականջներուն մէջ դեռ կը հնչէին Գարանթինայի Մերոպեան վարժարանին մէջ սորված մէկ դասը.— «Յուսահատութիւնը ճախճախուտ մըն է, որուն մէջ մխրճուողը կը կորսուի»: Այս գիտակցութեամբ գինուած, ան կը նետուի կեանքի ասպարէզ, դիմագրաւելով նախատեսելի և աննախատեսելի ամէն ձեւի մարտահրաւէրները:

Բարեկամի մը թելադրութեամբ և 5,000 տոլարի օգնութեամբ, կը դառնայ գործընկեր՝ քրիստոնեայ դարձած ամերիկացի հրեայի մը հին հագուստներու գործին, որ գրեթէ սնանկութեան դուռը հասած էր: Երիտասարդ Վահան, իր հմտութեամբ և յամառ աշխատանքով, տարի մը չանցած ոչ միայն կը փրկէ գործը, այլև զայն կը դարձնէ յաջողակ, շահութաբեր ձեռնարկ մը, դառնալով ընկերութեան նախագահ: Չեն ուշանար գործընկերներուն դաւերը. արուեստականօրէն սարքուած ժողովներով, Վահանը պաշտօնանկ կը դարձնեն նախագահի դիրքէն: Հիասթափուած ու զայրացած Վահանը, կ'ուզէ լաւ դաս մը տալ մանաւանդ դաւադրութեան ետին եղող իր գործընկերոջը: Սակայն, իր տարեց, հին հերոս ուսուսաց բարեկամը՝ Լեւոն Պէկ, կը խրատէ հեռու մնալ ծայրայեղ քայլերէ, ըսելով. «Բարեկամ մը ունիմ, որ տարիքը առած է և տէր իմիչքի

երկու խանութներու (liquor stores): Պէտք ունի քեզի պէս վստահելի երիտասարդի մը. խօսիմ իրեն, Whittier փողոցի վրայ գտնուող խանութին թող գործընկեր դարձնէ քեզ»:

Այդպէս ալ կ'ըլլայ: Շաբաթական 125 տոլար (40-45 տարի առաջ բաւական նախանձեղի գումար մը) ստացող և գործին ընկեր Վահանը գոհ է: Այս ալ երկար չի տեւեր: Անուշին թախանձանքներուն վրայ, կը տեղափոխուի Ֆրէզնո: Այստեղ, Վահան, հայ բարեկամի մը (Տէլիբմէնճեան) օգնութեամբ և իր ալ ի պահ դրած 10,000 տոլարը օգտագործելով, դարձեալ կը լծուի salvage-ի՝ հին հագուստներու և կտորներու գործին: Կը դիմէ Salvation Army-ին: Գործակցութիւնը կ'ըլլայ փոխադարձ օգտակար: Տարիներու հոլովոյթին հետ այնքան կը յաջողի, որ լրիւ կը տիրապետէ Salvage-ի շուկային և մէկիկ-մէկիկ շարքէն դուրս հանելով իրեն դէմ դաւողները: Վահանի, կամ այլեւս Chamlian Enterprises, Inc. անունը կրող իր ընկերութեան և Salvation Army-ի միջեւ ընթացող առողջ ու անկեղծ գործակցութեան շնորհիւ, Salvation Army-ն ոչ միայն միլիոնաւոր տոլարներ կը խնայէ, այլև նոր կեդրոններ կը բանայ բազմաթիւ նահանգներու մէջ: Իսկ միւս կողմէ, Chamlian Enterprises, Inc. ի առջեւ կը բացուին ամերիկեան մեծ շուկային դռները: Ամբողջ ամերիկեան բանակի սրբիչները կը հայթայթուին Շամլեան հաստատութեան կողմէ: Տարեկան 30-50 միլիոն փառնու վերամշակուող (recycled) հին հագուստներն ու կտորները՝ վերստին կեանքի կը կոչուին որպէս բամբակի, ասետատի, փոլիէստրի, աքրիլիքի և մետաքսի արտադրութիւններ և կ'արտածուին Ամերիկայի և աշխարհի մնացեալ ցամաքամասերը, դառնալով ամենամեծ արտադրական ընկերութիւնը այս մարզին մէջ:

Ասոր գուգահեռ, Chamlian Enterprises, Inc. ի ճիւղեր կը բացուին նաեւ Լոս Անճելըսի, Օքլէնտի և այլ վայրերու մէջ: Հարիւրաւոր գործաւորներ, պաշտօնեաներ, բեռնակառքի վարորդներ իրենց հացը կ'ապահովեն, շնորհիւ Վահան Շամլեանի կողմէ կեանքի կոչուած այս գործին: Ասոնց վրայ եթէ աւելցնենք՝ Ամերիկայի բազմաթիւ նահանգներուն մէջ Chamlian Enterprises, Inc. ի վերջ յիշուած արտադրութիւններուն վաճառքով զբաղող հաստատութիւնները, գումարը կը հասնի հազարաւոր ընտանիքներու:

Salvation Army-էն առած հագուստեղէնները գատելով, բամպակեղէնները ղրկեց Փաքիստան և Հնդկաստան, բրդեղէնները և լաւ jeans-երը՝ Գերմանիա, իսկ անպէտ աւելցածները չնետելու և շրջապատը մաքուր պահելու համար, իտալիայէն յատուկ մեքենաներ բերելով մանրեց և ամերիկեան բանակին ու ծովոյժին համար վերամակներ՝ պլէնքէթներ պատրաստեց, նուազ լաւերով պատրաստեց գորգի տակի mat-երը (յատակաբարձերը), իսկ բոլորովին անպէտներուն քիմիական նիւթ մը խառնելով, վերածեց ածուխի, որոնք 24 ժամ աշխատող շիշի և փլաստիքի գործարաններու փուռերուն որպէս վառելանիւթ կը ծառայէ:

Կտորներու գործին մէջ Վահան




Հարցադրուածը կը պատկանի հայրենի լրջախոհ մտաւորական ու վաստակաւոր լրագրող Սերգէյ Գալոյեանին:

«Իսկապէս ինչ էր մեր այս երկրորդ հանրապետութիւնը, Չարենցի հանգոյն ասած միֆէ էր, թէ ապրած կեանք, չար իշխանութեան եւ սարսափի տակ գոյատեւած մի մեծ ժամանակաշրջան, թէ լուսաշող ու պայծառ նուաճումները եւ աշխարհաճանաչման բազմաբեղուն տարիները», հարց կու տայ ան: Եւ որպէսզի, ինք իբրեւ հարցադրող կողմնակալ կարծիք յայտնած չըլլայ, խօսքը կու տայ խորհրդային Հայաստանի օրով մտաւորական մարզի երկու խոշորագոյն դէմքերու՝ Սիլվա Կապուտիկեանին եւ նշանաւոր նկարիչ Եղուարդ Իսաբեկեանին, որ երկար տարիներ պետական պատկերասրահին տնօրէնը եղած էր: Երկուքն ալ իրենց վկայութիւնները տուին, ի հարկէ, բայց մանաւանդ Ս. Կապուտիկեանին պատասխանը հանրութեան սեփականութիւնը դարձաւ սփիւռքահայ մամուլին մէջ, որ ծերունագարդ բանաստեղծուհին առոյգ մտքով եւ իրեն յատուկ անկեղծութեամբ ու յանդգնութեամբ լուսարձակի տակ կ'առնէր խորհրդային Հայաստանի եօթանասունամեայ շրջանը՝ ժողովրդային կեանքի տխուր եւ ուրախ ելեւէջներով, ամպամած ու արեւաշող երկինքով:

Իսկապէս, մեր պատմութեան համար ինչ կը ներկայացնէր խորհրդային Հայաստանը, որուն ոմանք բ. հանրապետութիւն որակումն իսկ կը գլանան: Այս տեսակէտը դաւանողները, ի հարկէ, նկատի ունին

այն իրականութիւնը որ Հայաստան մաս կը կազմէր Սովետական Միութեան: Բայց անոնք կը մոռնան որ այդ հսկայական պետութիւնը 15 անկախ հանրապետութիւններէ կը բաղկանար: Թէ անոնք որքանով անկախ կամ կախեալ էին Մոսկուայէն՝ ատիկա կախում ունէր տուեալ հանրապետութեան դեկլարներու հասկացողութենէն, ազգային գիտակցութենէն եւ դիւանագիտական կարողութենէն: Իւրաքանչիւր հանրապետութիւն այնքան անկախ էր, որքան որ իր պետական դեկլարները անկախ մտածողութեան տէր էին եւ անկախութեան գերագոյն իտէալը կը փայտայտէին: Իսկ այդ իտէալէն գոլով ստրկամէտները միշտ ալ կախեալ եղած են:

Կախեալութեան անխուսափելի տուրք մը տալը պարտադիր էր անշուշտ, երբ չմոռնանք որ համայնավար կեդրոնացեալ վարչակարգով կը կառավարուէին այդ մեծ պետութեան բաղկացուցիչ երկիրները: Բայց, այդպէս ըլլալով հանդերձ, միջազգային եղբայրութեան լոզունգային ու ստապատիր միտոլոգիան մէջ, հայ ժողովուրդի խորապէս ազգասէր զաւակները՝ Միկոյեանէն մինչեւ Չարոբեան եւ Կարէն Դեմիրճեան՝ Սովետ վերնախաւին մէջ թափանցած թրքազերիական ազդեցութիւնը չէզոքացնելով, կրցան հայ ժողովուրդի շահերը կարելի առաւելագոյն չափով պաշտպանել, կառուցելով Մեծ Եղեռնի, Սարդարապատի հերոսամարտի կամ Կարէն Դեմիրճեան մարզա-համերգային համալիրի պէս յուշակոթողներ:

Հակահայ դաւադրութեան վտանգալից արարք մը եղաւ 1970-ական թուականներուն Սովիէթ սահմանադրութեան վերամշակման ընթացքին հայերէնը իբր Հայաստանի պետական լեզու դուրս ձգելու փորձը, որ Հայաստանի օրուան դեկլարար Կարէն Դեմիրճեանի ճկուն դիւանագիտութեան ու յամառ ընդդիմութեան շնորհիւ ձախողութեան դատապարտուեցաւ:

Ահա, ա՛յս էր երկրորդ հանրապետութիւնը:


Ճիշդ է որ 1918-20 տարիներուն, ստրկութեան երկար ժամանակաշրջանէ մը յետոյ, գոյութիւն առաւ անկախ Հայաստանի առաջին հանրապետութիւնը եւ ներկայիս կայ երրորդ հանրապետութիւնը, սակայն այդ երկուքին միջեւ գտնուած եօթանասունամեակին վերջին հազարամեակի պատմութեան մէջ արձանագրուած պիտի մնայ ոսկեայ տառերով: Արդարեւ, այդ եօթանասունամեակի ընթացքին է որ ցեղասպանութենէն փրկուած հայ ժողովուրդի տարահալած բեկորները հայրենի հողին վրայ համախմբուելով վերակազմեցին հայ ազգը: Այդ ժամանակաշրջանին է որ հիմնուեցան մեր գիտութեան ու կրթու-

թեան օճախները, վերածլան ու ծաղկեցան գրականութիւնը, երաժշտութիւնը, նկարչութիւնն ու ճարտարապետութիւնը եւ արուեստի բոլոր մարզերը: Վերջապէս, աւերակներու վրայ վերաշինուեցաւ նոր հայրենիք, որուն հագիւ 800,000-ի իջած բնակչութիւնը հասաւ 3,1/2 միլիոնի:


Այսօրուան արտագաղթին հակառակ ներգաղթ կազմակերպուեցաւ՝ դարերու ընթացքին առաջին անգամ ըլլալով:

Ահա, այս էր Բ. Հանրապետութիւնը, որուն բարիքները վայելած, յաճախ նոյնիսկ տառապած հարիւր-հազարաւոր տարագիրներ լոս անձեւըններու մէջ այդ օրերու կարօտախտով կը տառապին:

Մեր մաղթանքն է որ գիտական եւ արուեստի մակարդակներու վրայ, ճարտարապետական եւ ճարտարարուեստի մարզերու մէջ, եւ մանաւանդ, ազգասիրական եւ հայրենասիրական մակարդակներու վրայ, Գ. Հանրապետութիւնը եւս կարենայ հասնիլ Բ. Հանրապետութեան եւ երանելի օր մը նոյնիսկ գերազանցէ ալ զայն, որպէսզի, աշխարհին ցոյց տանք, թէ մենք արժանի ենք անկախութեան:



Jessica Demirdjian
Realtor®



Prudential

California Realty
9878 Hibert Street
San Diego, CA. 92131
Bus 858 653-6400 Fax 858 653-6440
Cell 619 846-7738 jessicad@prusd.com



WAHIB'S MIDDLE EAST RESTAURANT
"Where the East Meets the West"

MEDITERRANEAN - LEBANESE FOOD

BANQUET HALL

CATERING FOR ALL OCCASIONS

FAMILY ENTERTAINMENT

EVERY FRIDAY & SATURDAY NIGHT INTERNATIONAL & ARABIC SHOW



CALL FOR RESERVATIONS
TEL 626-281-1006 626-587-1048
FAX 626-281-3641

910 E. MAIN ALHAMBRA, CA



BELLY DANCING

NAZO, VARTAN, AMIR & SINGER MUHAMMAD

ՊՐԵՍԹ-ԼԻԹՈՎՍԿԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԼԵՈՆ ԹՐՈՑԿԻՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԿՍԵԱՆ

1917 թ. Նոյեմբերի 22ին (նոր տոմարով Դեկտեմբերի 9ին) Պրեսթ-Լիթովսկի սպայական ակումբի շէնքում, որտեղ գտնուում էր Արեւելեան ռազմաճակատի գերմանական հրամանատարութեան շտապը, սկսեց հաշտութեան բանակցութիւնները նորաստեղծ խորհրդային պետութեան եւ գերմանական պլոքի երկրների միջեւ: Արեւելեան ռազմաճակատի գլխավոր հրամանատար, արքայազն Լէփոլտ Պաւլապի չոր ողջոյնով բացեց հաշտութեան համաժողովը ու հեռացաւ դահլիճից: Գերմանական պատուիրակութեան ղեկավար, արտաքին գործերի պետական քարտուղար Ֆոն Կիւլմանը գրաւեց նախագահի տեղը...:



Լեոն Թրոցկի

տօրէն հրեաներ չէին ապրում, իրենց պետականութիւնը նրանք կորցրել էին մօտ երկու հազար տարի առաջ: Եւ ահա այդ պայմաններում Թ. Հերցէլն առաջ քաշեց հրեաների համար «իրաւապաշտպանութեան ստեղծելու գաղափարը: Նախ պետք է ստեղծուէր Պաղեստինի նկատմամբ ինքնիշխանութիւն, որից յետոյ միայն շարժման առաջնորդները «նաւերը կ'ուղարկէին հրեայ վերաբնակների յետեւից»: Այս ծրագիրը Թ. Հերցէլը շարադրեց ժրնեւում լոյս տեսած «Հրեական Պետութիւն» գրքով: Այստեղ նա ուղղակի յայտարարում էր, որ իր ծրագիրը կարելի է իրականացնել «առողջ դատողութեան հողի վրայ, մեր տրամադրութեան տակ եղած միջոցներով եւ գործնական քաղաքականութեան սահմաններում»: Այս նպատակով նա պատրաստում էր յառաջիկայ օրերին ստեղծել «հրեաների միութիւն»՝ հրեական քաղաքնապետութեան մեծ աշխարհի 'ուղեգրային կեդրոն», որը կոչուած էր ուղղորդել «համաշխարհային քաղաքականութիւնը»: Այդ քաղաքականութեան բաղկացուցիչ մասերն էին հռչակուած Թուրքիայի համակրանքը նուաճելուն ուղղուած արեւելեան կողմնորոշման քաղաքականութիւնը եւ եւրոպական տէրութիւններին հրեական պետութեան ստեղծմամբ շահագրգռող արեւմտեան կողմնորոշման քաղաքականութիւնը:

Թէոտոր Հերցէլ յաջողութիւն չունեցաւ, բայց նրա աշակերտները շարունակեցին նրա գործը: Նրանցից մէկը՝ Գ. Պասմանիկը, գրում էր. «Մենք համոզուած ենք, որ մօտենում է ժամանակը, - եւ այն հեռու է, - երբ Թուրքիան կ'ընդունի, որ սիոնիզմը երբեք, ինչ համազանգրներ էլ լինեն, չի կարող իրեն, իբրեւ պետութեան, վնասել, որ նորոգ Պաղեստինը՝ նորոգուած դրամագլուխով եւ աշխատանքով, կարող է միայն ամրացնել Օսմանեան կայսրութիւնը, այն աւելի ուժեղ դարձնել տարբեր տէրութիւնների նկրտումների դէմ պայքարում, սակայն Թուրքիային անհրաժեշտ է տալ դրա ապացոյցները...»: (Հ.Ս. Պասմանիկ Գ., «Առանցմաշնորհումները եւ Մեմաշնորհները», Սիոնիզմի Իրականացման Մեթոդները», 'Կողմիմ», հրտ., Օտեսա, 1906, էջ 22-23): Թուրքիայի հասցէին հրեական ազգային շարժման առաջնորդների կողմից տրուած նման արտայայտութիւնները շատ կարելի է չիշատակել: Օրինակ, 1909 թուին Ուոլֆստոնը մի ճառում յայտարարեց. «Մենք ոչ մի հակասութիւն չենք տեսնում օսմանեա շահերի եւ մեր սիոնիստական ձգտումների միջեւ: Չի կարելի տարնաջատել իրար

պատկանող եւ փոխ լրացնող բաները...: Օսմանեան կայսրութեան միանութիւնը, նրա տեղն աշխարհում իբրեւ տէրութիւն, նրա բարօրութիւնը, անվտանգութիւնն ու նրա սնտեսական մարմինների յաջողակ գարգացումը մեր բոլոր գործողութիւնների նախնական եւ ինքնին հասկանալի պայմանն են»:

Յենուելով Թուրքիայի վրայ, սիոնիստները միաժամանակ յոյս էին կապում նաեւ Գերմանիայի հետ: 1916 թ. սկիզբին գերմանական գլխավոր հրամանատարութիւնն եւ կառավարութիւնն ինքը, տեսնելով հրեական շարժման աճող ազդեցութիւնն աշխարհում, Թուրքիային կոչ արեցին հրեաների հետ համաձայնութեան գալ Պաղեստինի վերականգմանը հարցում, որը «կ'ամրապնդուէր Գերմանիայի երաշխիքներով»: Թուրքերը, սակայն ռիսքի չէին դիմում: Այդ ժամանակ, 1917ի աշնանը, սիոնիստական առաջնորդները Պերլինից վերակողմնորոշուած են դէպի Լոնտոն, աշակցութիւնն գտնելով Լոյտ ձորճի, արտաքին գործերի նախարար Պալֆուրի, Լորտ Սեալի, գեներալ Սմեթսի, Մարք Սայքսի եւ այլոց մօտ: 1917 թ. Փետրուարի 7ից անվիրացիները բանակցութիւններ էին վարում սիոնիստների ներկայացուցիչների՝ Ն. Սոկոլովի, Հ. Ուալգամանի, Մ. Գաստերի, Ռոպերթ Սեմուելի, Լորտ Ուալտեր Ռոչիլտի, ձէյմս Ռոչիլտի, Բ. Չեյնովի, Լ. Պրանդէսի եւ ուրիշների հետ: Համաձայնագիր նախա-

ռազմական գրասենեակի արեւելեան յանձնաժողովի նիստում հանգամանօրէն քննարկուած էր Պաղեստինի հարցը՝ կապուած Մայքս-Փիքոլի համաձայնագրի եւ Պալֆուրի Հռչակարգի հետ, ինչպէս նաեւ մանտադի (խնամատարութեան) եւ մանտատար-տէրութեան հարցը: Նիստում ելոյթ ունեցաւ Լորտ Քրոքընը: Նա յայտարարեց, որ Պալֆուրի Հռչակարգից յետոյ «յաջողուել է հրեաների բաւականին նշանակալից ներգաղթ դէպի Պաղեստին... Սիոնիստները լիովին օգտուել են իրենց առջեւ բացուող հնարաւորութիւնից (յետագայում նրանք մտադիր են աւելի լրիւ օգտուել դրանից): Ինչպէս ցոյց կը տրուի ստորեւ, այդ ժամանակ արդէն համաձայնութիւն էր կայացել Թրոցկու եւ Թալաթի միջեւ: Հենց դա էլ հրեաներին թոյլ տուեց աւելի լրիւ օգտուել այդ հնարաւորութիւնից:

Անգլօ-սիոնիստական մերձեցման եւ դաշինքի կնքման հետ միաժամանակ շարունակուած էր մերձեցումը Թուրք-սիոնիստական դաշինքի կնքման համար: Հրեական ազգային շարժման առաջնորդները ձգտում էին Թուրքերին ապացուցել իրենց հետ համաձայնութեան գալու քաղաքական նպատակայարմարութիւնը:

Լ. Թրոցկին տեղեակ էր ոչ միայն այդ ամէնին (նա գիտէր նաեւ Հայաստանի պատմութիւնը, գովեստով էր խօսում հայ ազգային-ազատագրական շարժման, Անդրանիկի մասին), այլեւ նրան վերապահուած էր լոնտոնեան կենդրոնի որոշումները կատարողի դերը ինչպէս Գերմանիայի նկատմամբ (նրան ստիպել վերսկսելու պատերազմը Ռուսաստանի դէմ), այնպէս էլ Թուրքիայի (ամէն գնով համաձայնութեան համեմատ):

Իր ռազմավարութեամբ Թրոցկին գործնականում պաշտպանում էր հենց այդ ծրագիրը, իսկ տեսականում՝ մշտական յեղափոխութեան գաղափարը: Առաջիկայ Պրեսթ-Լիթովսկեան ներկայացման բնագիրը գրել էր Թրոցկին, եւ հենց ինքն է խաղում էլ գլխավոր դերը:

ԻՈՖՖԵ-ԿԻԼՍԱՆ - ՀԱՔԲԸՓՈՇԱ

Այժմ վերադառնանք այն օրուան, երբ խորհրդային պատուիրակութիւնը Ա. Իոֆֆէի գլխավորութեամբ սկսեց բանակցութիւններ վարել գերմանական պլոքի հետ:

Դատելով ըստ ամենայնի, Քառեակ Դաշինքի պատուիրակութեան յարաբերութիւնները իս. Ռուսաստանի ներկայացուցիչների հետ լուեալ բնոյթ էին կրում: Ահա թէ ինչ է պատմում այդ մասին Իոֆֆէն. «Գերմանիան ծարաւի էր Ռուսաստանի հետ անջատ հաշտութեան: Նա այդ ուղղութեամբ մի քանի քայլեր ձեռնարկեց դեռեւս ցարիզմի օրօք: Այժմ նա ստեղծում էր բանակցութիւնների գուտ գործարար բնոյթի պատրանք» («Պրեսթ-Լիթովսկի հաշտութեան Բանակցութիւնները», լիակատար սղագրական բնագիր, Մ., 1920, էջ 341): Գերմանացիները արեւելքում հաշտութեան էին ձգտում, որպէսզի գործերը նետեն արեւմուտք՝ Անտանտի տէրութիւնների դէմ:

Թուում էր՝ հարկաւոր էր միայն օգտագործել «Ռուսաստանի հետ անջատ հաշտութիւն կնքելու գեր-

ՊԱԼՏՈՒՐԻԵԱՆ ՀՈՉԱՎԱԳԻՐԸ

Ռուսաստանի համար բախտորոշ այդ պատմական օրերին Արեւմուտքում ծաւալում էին այլ իրադարձութիւններ, որոնք թուում է, ոչ մի ընդհանուր բան չունէին Հոկտեմբերեան դէպքերի հետ, սակայն իրականում անմիջականօրէն կապուած էին Պրեսթի հաշտութեան հետ...:

19-րդ դարու երկրորդ կէսին



Հերցէլ իր մօր հետ գրադարանին մէջ

աւատրիացի լրագրող Թէոտոր Հերցէլը դարձաւ հրեական ազգային շարժման նոր փուլի հիմնադիրը: Նա դրա նոր բովանդակութիւն եւ նոր ուղղութիւն հաղորդեց, որն անուանեց սիոնիստական: Այն նման չէր որեւէ այլ ազգային-ազատագրական շարժման: Պաղեստինում փաս-



Հրամանատար Հաֆմըն

գիծը հաւանութեան արժանացաւ Ա.Մ.Ն.ի, Ֆրանսայի, Իտալիայի կողմից՝ յանձինս Ուիլսոնի, Քլեմանտոյի, Փուանքարէի, Պրիանի, Նիտիի: 1917ի Նոյեմբերի սկզբին անգլիական ռազմական գրասենեակը հաստատեց Պալֆուրեան Հռչակագիր անուանուած անգլօ-սիոնիստական ռազմաքաղաքական համաձայնագիրը, ըստ որի Անգլիան խոստանում էր յաղթանակից յետոյ հրեաների համար «ազգային օճախ հիմնել Պաղեստինում»: Սիոնիստներն իրենց հերթին պարտաւորուած էին, ինչպէս վկայում է Լոյտ ձորճը, միաւորել հրեաներին եւ դաշնակիցների համար ապահովել դրանից, ինչպէս ցոյց կու տար բոլոր երկրներում, թոյլ չտալ կամ արգելակել Ռուսաստանի դուրս գալը պատերազմից (Լոյտ ձորճ, «Ճշմարտութիւնը Հաշտութեան Բանակցութիւնների Մասին», Մ., 1957, հ. 2, էջ 301-303):

Մի հետաքրքիր փաստ: Փոքր ինչ աւելի ուշ Մեծն Բրիտանիայի

ՊՐԵՍԹ-ԼԻԹՈՎՍԿԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԼԵՈՆ ԹՐՈՑԿԻՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Շաբաթական 14-էն

մանացիների ծարաւը» եւ ձեռնամուխ լինել հարցի գործնական քննարկմանը՝ առաւել օգտակար պայմաններով խաղող համաձայնութեան գալու համար:

1917 թ. Նոյեմբերի 27ին (Դեկտեմբերի 13ին) քաղաքական յանձնախմբի միացեալ նիստում գերմանացիները հրապարակեցին հաշտութեան պայմանագրի բովանդակը՝ որը բաղկացած էր 16 յօդուածից: Դրանցից 14-ն արդէն նախորդ նիստերի ժամանակ հիմնականում համաձայնեցող եին խորհրդային պատուիրակութեան հետ: Երկու յօդուած առաջ էին տարած քային հարցերի: Այդ յօդուածները վէճերի տեղիք տուեցին:

Քանի որ տարած քային հարցը սկզբունքային չափով նշանակութիւն ունի Պրեսթ-Լիթովսկի թեան հարցերի մէջ, մենք ընթացող ուշադրութիւնը հրաւիրում ենք հետեւեալի վրայ: Գերմանական առաջիկայի դնում թուրքիայից, ընդհանրա-



Լեո Քամենեւ

պէս Մերձաւոր Արեւելքից ուսանական զորքերի յետ քաշման պահանջ: Նա միայն պնդում է, որ իրենց գիշերն Ռիկան եւ Ռիկայի ծոցի մի քանի կղզիներ եւ առանձնացնում է Լեհաստանի ու Մերձապալթիկայի ինքնորոշման հարցը:

Խորհրդային երիտասարդ պետութեան շահերը պահանջում էին արագ համաձայնութեան գալ գերմանացիների հետ: Դրա փոխարէն Ա. Իոֆֆէն ընդունում է վաղորօք նախապատրաստուած որոշում... բանակցութիւնները ընդհատելու վերաբերեալ: («Պրեսթ-Լիթովսկիի Հաշտութեան Բանակցութեան Բանակցութիւնները», հ.1, էջ 126):

Այսպիսի աւարտ ունեցան Իոֆֆէի բանակցութիւնները աւստրոգերմանական պլոքի ներկայացուցիչների հետ:

Իսկ ինչպիսի՞ն էին թուրքական պատուիրակութեան հետ բանակցութիւնների արդիւնքները:

Այդ հարցի պատասխանն ինչ որ չափով կարող ենք գտնել միայն Իպրահիմ Հաքքը փաշայի՝ 1917 թ. Նոյեմբերի 27ի վերջին լիակազմ նիստում ունեցած ելուցմանը:

«Այսօր, - ասել է Հաքքը փաշան, - տեղի ունեցած ուսական եւ թուրքական պատուիրակութիւնների համատեղ նիստ, եւ ես այն սպաւորութիւնն ստացայ, որ Ռուսաստանին եւ թուրքիային վերաբերող հարցերը բարեյաջող լուծում կը գտնեն: Դա լաւ արդիւնք է: Այս 6 օրերի ընթացքում չկատարուած

աշխատանքը իմ կարծիքով արժանի է գովեստի: Մենք այն շատ արագ արեցինք: Նման բարեյաջող արդիւնքների համար մենք պէտք է երախտապարտ լինենք ուսական պատուիրակութեանը, որ այս դժուարին բանակցութիւնների ընթացքում հանդէս բերեց անկեղծութիւն, արդարամտութիւն եւ սթափամտութիւն: Ռուսական պատուիրակութեան պարոնայք ներկայացուցիչները ցոյց ցուցանեցին, որ իրենք դեմոկրատիայի իսկական ներկայացուցիչներ են եւ, միաժամանակ, հիանալի դիւանագէտներ են ու պետական գործիչներ» («Պրեսթ-Լիթովսկիի Հաշտութեան Բանակցութիւնները», էջ 39,40):

ԹՐՈՑԿԻՆ ԵՒ ՖՈՆ ԿԻԼՍԱՆ

Իոֆֆէն Պրեսթ-Լիթովսկից մայրաքաղաք ժամանեց նոր տարուայ շեմին, եւ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար թրոցկուին զեկուցեց կատարուած աշխատանքի, գերմանական պլոքի հետ բանակցութիւնների արդիւնքների մասին: Նոր տարուայ յետոյ 1918 թ. Յունուարի 7ին, Ժ.Կ.Ս.ն լսեց թրոցկու զեկուցումը հաշտութեան բանակցութիւնների ընթացքի մասին: Ձեկուցումն ընդունուեց ի գիտութիւն, նշանակուեց յանձնաժողով, որը շտապ կարգով պէտք է քննարկէր եւ ուրուագէէր Գերմանիայի հետ կնքուելիք պայմանագրի հիմնական դրոյթները: Փաստաթղթերում չի յիշատակուում, թէ ով էր մնում յանձնաժողովի մէջ, չի խօսուում նրա եզրակացութիւնների ու յանձնարարականների մասին: Յայտնի է մի բան՝ խորհրդային ղեկավարութիւնը Պրեսթ-Լիթովսկու յետագայ բանակցութիւններ վարող պատուիրակութեան ղեկավար նշանակեց հենց թրոցկուն:

Մեկնելուց առաջ թրոցկին թուրքերին եւս մի նուէր մատուցեց ոչ առանց Լենինի գիտութեան: Նա հրաման արձակեց կողկասեան ուղմաճակատից ուսական բանակի գործման մասին:

Եւս մի հանգամանք: Թրոցկին հանդիպում է ունենում Մոսկուայում անգլիական նախկին փոխ հիւպատոս Բ. Լոկարտի հետ: Վերջինս Մոսկուայէր ուղարկուել այն բանից յետոյ, երբ անգլիական ռազմական գրասենեակը ընդունեց Պալֆուրի Հուչակակազմը:

Այս երկու փաստերը յետագայ նշանակութիւն ունեցան Պրեսթի բանակցութիւնների ընթացքի վրայ, որոնք վերսկսուեցին 1917 թ. Դեկտեմբերի 27ին (1918 թ. Յունուարի 9ին), տասնմէկօրեայ ընդմիջումից յետոյ եւ շարունակուեցին մի ամբողջ ամիս, մինչեւ 1918 թ. Փետրուարի 10ը:

1918 թ. Յունուարի 1ին (14ին) Կիւլմանը Խորհրդային պատուիրակութեանը ներկայացրեց հաշտութեան պայմանները՝ Գերմանիայի եւ նրա դաշնակիցների զորքերը մնում են իրենց գրաւած շրջաններում: Ձեւականօրէն դա նոյն նախագիծն էր, որը գերմանական պատուիրակութիւնը հրապարակել էր աւելի վաղ, երբ խորհրդային պատուիրակութեան ղեկավարը Իոֆֆէն էր: Այդ նախագիծը կազմուած էր 16 յօդուածներից, որոնք, բացառութեամբ առաջին երկուսի, արդէն այդ ժամանակ համաձայնեցող էին:

Քաղաքական յանձնախումբի 1918 թ. Փետրուարի 7ի հերթական

նիստում թրոցկին հերթական «հրետանային համագրկն» ուղղեց գերմանական դիրքերին: Ահա թէ նոյն օրը ռալիի վարչապետին յղած իր հեռագրում ինչ է ասում Կիւլմանը. «Թրոցկին ներկայացրեց իր պատուիրակութեան անդամներից մէկին (խօսքը Կ. Ռադէկի մասին է) կարողաւ մի երկարաշունչ փաստաթուղթ, որն իր լիտիութեամբ ու ամբողջակամբութեամբ ի սպառնալից էր այն ամէնը, ինչ ուսաները մինչեւ այդ արել էին...»:



Կրեկտրի Քիւլման

Թուրքական անդամներից մէկին (խօսքը Կ. Ռադէկի մասին է) կարողաւ մի երկարաշունչ փաստաթուղթ, որն իր լիտիութեամբ ու ամբողջակամբութեամբ ի սպառնալից էր այն ամէնը, ինչ ուսաները մինչեւ այդ արել էին...»:

Այդ, գերմանացիները հաշտութիւն էին տեսնում Արեւելքում, եւ քանի որ թրոցկին չէր գնում դրան, նրանք առաջին անգամ առաջ քաշեցին թուրքիայի հարցը, որպէսզի ճնշում գործադրեն խորհրդային կառավարութեան վրայ: Մինչ այդ գերմանացիները թուրքերին պահում էին յետին փլանում:

Ռուս-Գերմանա-Աւստրո-Հունգարական պատուիրակութեան (քաղաքական յանձնախումբի) նիստում 1918 թ. Յունուարի 27ին (Փետրուար 9) Ֆոն Կիւլմանն առաջին անգամ նշեց, որ գերմանացիների համար «անընդունելի կը լինէր այնպիսի հաշտութեան պայմանագիրը, ուր դիւանագիտական երաշխիքներ չեն լինի այն մասին, որ մեր դաշնակիցների՝ Փեթրովրատեան կառավարութեան կողմից գրաւուած շրջանները կը մաքրուեն»: Սակայն պէտք է նկատի ունենալ, որ նախ եւ առաջ գերմանացիները պահանջում են միայն դիւանագիտական երաշխիքներ եւ ոչ թէ պահանջի անյապաղ կատարում, եւ երկրորդ, խօսքը միայն այն շրջանների մասին է, որոնք ուսական զորքերը գրաւել էին պատերազմի ընթացքում: Նոյն Ֆոն Կիւլմանի ելուցից երեւում է, որ թրոցկին դեռեւս մինչ այդ էր նրան հաւատարմել, որ «գրաւուած թուրքական շրջաններում գտնուող զորքերը ենթարկուած են» խորհրդային կառավարութեանը («Պրեսթ-Լիթովսկիի Հաշտութեան Բանակցութիւնները», էջ 185, 186), թէեւ երկրի բարձրագոյն շահերը թրոցկուց ամենեւեւին էլ չէին պահանջում նման հաւատարմացում տալ: Բաց թրոցկին պատրաստուած էր աւելի հեռուն գնալ:

Պատասխանելով Կիւլմանին, նա ասաց. «Ինչ վերաբերում է թուրքական շրջաններից զորքերի դուրս բերմանը, ապա մենք ունենք բաւականին ծանրակշիռ սկզբունքային նկատառումներ, որոնք մեզ թոյլ չեն տալիս հայկական տարածքներից զորքերի դուրս բերումը դիտելու իբրեւ փոխանակում Ռուսական Կայս-

րութեան այս կամ այն մասից զորքերի դուրս բերման դիմաց: Ճիշդ այնպէս, ինչպէս մենք հիմա մեր զորքերը դուրս ենք բերում Պարսկաստանից, այդպէս էլ մենք դրանք դուրս ենք բերում - եւ արդէն ձեռնամուխ ենք եղել դրան - Հայաստանից: Ինքնին հասկանալի է, որ մենք այդ մասին ամենապատակաւ պարզ ձեւով կը յայտարարենք թուրքիայի հետ մեր պայմանագրում, եթէ միայն նրա հետ հաշտութեան պայմանագիր կնքենք» (Ուոյն տեղում, էջ 185, 186):

Յիշեցնենք, որ այդ ժամանակ ուսական զորքերն ազատագրել էին գրեթէ ամբողջ Մեծ Հայքը: Մնում էր միայն մի ռազմերթ՝ Պաղեստինեան ռազմաճակատում գործող անգլիական զորքերին միանալու համար: Մինդեռ այժմ պատուիրակութիւնը պատրաստում էր անօդանավան թուրքերին յանձնել ոչ միայն այդ ամէնը, այլեւ Արեւելեան Հայաստանը: «Ծանրակշիռ սկզբունքային նկատառումներով...»:

1918 թ. Փետրուարի 9ին հրապարակելով Գերմանիայի կողմից առաջարկուած ձեւակերպումը, Կիւլմանն աւելացրեց, որ դրա ընդունումը բացարձակօրէն անհրաժեշտ պայման է: Թրոցկին հրաժարուեց որեւէ բանակցութիւն վարելուց: Կիւլմանը նախագրուած զեկուցումը մէկ անգամ եւս. «Եթէ հաշտութեան պայմանագիրը չկնքուի, ապա ակնյայտ է, որ նշանակութիւնը կը կորցնի զինադադարի պայմանագիրը եւս, եւ նրանում նշուած ժամկէտը լրանալուց յետոյ պատերազմը կը վերսկսուի» (Ուոյն տեղում, էջ 88):

Նման յայտարարութեամբ հանդէս եկաւ նաեւ աւստրո-հունգարական պատուիրակութեան ղեկավար Ջեոնինը: Դրանով Փետրուարի 9ի նիստն աւարտուեց: Ուշագրաւ է, որ Ջեոնինի հետ հանդիպման ժամանակ, որին ներկայ էր նաեւ Կարախանը, թրոցկին ասաց, որ ինքը «գերմանացիների հետ համաձայնութեան չի գնայ, անգամ եթէ դա յանգեցնի Ռուսաստանի նոր վարչակարգի տապալմանը»: Փետրուարի 10ի նիստում Կիւլմանը պահանջեց վերջ տալ վիճաբանութեանը եւ «քննարկել միայն այն կէտերը, որոնք հնարաւորութիւն են տալիս յանգելու որոշակի արդիւնքների»: Դրա փոխարէն թրոցկին ժողովրդական Կոմիսարների Խորհրդի անունից հրապարակեց մի յայտարարութիւն, ուր ասուած էր. «Հրաժարուելով բռնադատողական պայմանագիրը ստորագրելուց, Ռուսաստանին իր կողմից պատերազմը Գերմանիայի, Աւստրո-Հունգարիայի, Թուրքիայի եւ Պուլկարիայի դէմ համարում է դադարեցուած: Ռուսաստանեան զորքերին միաժամանակ լիակատար զորացրման հրաման է տրուած ամբողջ ռազմաճակատով մէկ»:

Լ. Թրոցկի, Ա. Իոֆֆէ, Մ. Պոկրովսկի, Ա. Բիցկեւիչ, Վ. Կարելին» (Նու. Կիւլմանի, Ա. Սարգսի, «Նորագոյն ժամանակի Միջազգային Քաղաքականութիւնը Պայմանագրերում, Նոտաբերում եւ Տեղափոխումներում», մաս 25, Մ., 1926, էջ 112-114):

Ինչպէս տեսնում ենք, այստեղ չկայ պատուիրակութեան քարտուղար Լ.Մ. Կարախանի ստորագրութիւնը: Նա հրաժարուեց ստորագրել:

(Շաբաթական 1)

ԼԻԲԱՆԱՆ - ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ

ՇՆՈՐՅԱՆԴԵՍ ՆՈՒԻՐՈՒՄԸ ԳՐԻԳՈՐ ԶԱՆԻԿԵԱՆԻ «ԶՈԿԱՏՐ, ՈՐ ԿՈՉԼՈՒՄ ԵՐ ՄԵԾՆ ՄՈՒՐԱՏ» ԳԻՐՔԻՆ

Օգտուելով հայ գրողներու երրորդ համաժողովին հայրենիքէն մասնակցող հայ գիրի ու դպրութեան ծառայողներու մէջ Գրիգոր Զանիկեանի ներկայութենէն, Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութիւնը յղացած էր ի պատիւ Գրիգոր Զանիկեանի «Ջոկատը, Որ Կոչուած էր Մեծն Մուրատ» գիրքին նուիրուած շնորհահանդէսի մը գեղեցիկ գաղափարը:



Գրիգոր Զանիկեան

Գրիգոր Զանիկեան ծանօթ անուն մըն է հայրենի գրականութեան մէջ: Հրատարակարական, թարգմանչական, գեղարուեստական ու վաւերագրական պատմուածքներով, ան հեղինակ է բազմաթիւ ստեղծագործութիւններու: Հայրենի մամուլի էջերուն մէջ մնացուն ներկայութիւն մը՝ իր խոհական ու վերլուծական յօդուածներով: «Ջոկատը, Որ Կոչուած էր Մեծն Մուրատ» լույս տեսած էր այժմ աւստրալիաբնակ ընկեր Ասատուր Հաճեանի մեկենասութեամբ, առ ի յաւերժացում իր հնչակեան գաղափարի հաւատարիմ հօր՝ ընկեր Զաւէն Հաճեանի յիշատակին:

Իւրաքանչեւ ոճ մը ունի ընթերցողին հասնելու, անոր «Ջոկատը, Որ Կոչուած է Մեծն Մուրատ» գիրքը, ոչ այնքան Արցախի պատերազմի մասին գիրք մըն է, որքան պատերազմի նկարագրութիւնը:

Հանդիսավարուհին ողջունի խօսքը փոխանցեց Մանուկ Աբեղեանի անուն գրական ինստիտուտի տնօրէն, հայ գրականութեան պատմութեան գիտակներէն եւ ժամանակակից ամենէն վաւերական գրաքննադատներէն Պրն. Ազատ Եղիազարեանին: Յարգելի մտաւորականը նախ փոխանցեց գոլէճին բակին մէջ գետեղուած անմահն փարամագի կիսանդրիէն իր տպաւորութիւնները եւ յայտնեց, թէ փարամագ ու իր տասն եւ իննը ընկերները ազգային յեղափոխութեան վառ անհատականութիւնները ըլլալով ազգային ազատագրական պայքարի պատմութիւնը պարտաւոր է իր արժանի գնահատութիւնը կատարելու անոնց: Ապա, Պրն. Ազատ Եղիազարեան անդրադարձաւ Մեծն Մուրատի յեղափոխական տիպարի արժեւորման եւ ջոկատին մղած դարաբաղեան կռիւներուն: Պրն. Եղիազարեան գնահատեց «Մեծն Մուրատ» ջոկատի հերոսապատմը ներկայացնելու Գրիգոր Զանիկեանի սահուն եւ դիւրամատչելի ոճը:

Գրասէր բազմութիւն մը մէկտեղուած էր Մահակեան-Լեւոն Մկրտիչեան Գոլէճի «Արմէն եւ Բերսաբէ ձէրէճեան» սրահը, որոնց մէջ վարչական բարեկարգումի նախարար Ժան Օղասապեան, պետական երեսփոխան ընկ. տոքթ. Եղիկ ձէրէճեան, ազգային, կուսակցական, միութենական դէմքեր, Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ Լեւոն Անանեան եւ հայ գրողներու համագումարին մասնակից մեծ թիւով հայրենի գրողներ:

Երեկոն սկսաւ Լիբանանի ու Հայաստանի քայլերգներու յտրնկայա ունկնդրութեամբ, որմէ ետք Նոր Սերունդ Մշակութային Միութեան աստեղատուօտ ընկերուհի Անի Եփրեմեան ողջունեց հայ գրողներու համագումարն ու մասնակիցները եւ աւելցուց, թէ բնական էր, որ Արցախի ազատագրական պայքարը իր արտացոլումը ունենար հայ գրականութեան եւ արուեստի միւս ճիւղերուն մէջ. «...Արցախի ազատագրական պայքարին մասնակից բազմաթիւ ջոկատներէն մէկն էր նաեւ «Մեծն Մուրատ» ջոկատը, որ կռուի ամենէն տաք պահուն եւ ամենէն թէժ կէտին վրայ կատարեց իր հայրենասիրական պարտականութիւնը: Երբ լսեցինք գիրքին հեղինակը Գրիգոր Զանիկեանին էր չզարմացանք, որովհետեւ ծանօթ էին հեղինակի անունն որպէս ժամանակակից հայ ռազմահայրենասիրական գրականութեան լաւագոյն ներկայացուցիչներէն մէկը: Զգարմացանք, բայց մեր սրտերուն մէջ զգացինք երախտագիտական խօսք մը ըսելու պարտականութիւն», - ըսաւ ընկերուհի Անի Եփրեմեան, որ աւարտելէ ետք իր խօսքը ողջունեց հայրենի գրողներու ներկայութիւնը եւ բեմ հրաւիրեց Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ Լեւոն Անանեանը: Պրն. Անանեան մեծապէս գնահատեց լիբանանահայ գաղութի կենսունակ մթնոլորտը եւ մաղթեց, որ ան պահպանէ այն ուժականութիւնը, որ գինք դարձուցած է Սփիւռքի բազմերակին մէկ կարեւոր կեդրոնը: Պրն. Լեւոն Անանեան ըսաւ, թէ Գրիգոր Զանիկեան

ՎԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ՈՒԺԸ

ԴՈՎՏ. ՊՐՈՖ. ԳԵՈՐԳ ԽՐԼՈՊԵԱՆ

Հայ ազգի հաւաքական գիտակցութեան մէջ հայրենիք հասկացութիւնը նախ եւ առաջ կապուած է հայու աշխատանքով, քրտինքով, արիւնով ու համատեղ կեանքով իմաստաւորուած հողով, տարածքով եւ միայն յետոյ քաղաքական, ընկերային ու հոգեւոր արժէքներով: Իր պատմութեան առանձնատկութիւնների ազդեցութեան տակ հայ հողը, հայու պայքանական ծննդավայրն ու հայրենիքը նրա գիտակցութեան մէջ, սրտի մէջ տիրակալօրէն նստում է ու դեկավարում է հայ անհատի գործունէութիւնը: Այս պատճառով էլ հայ հայրենակցական միութիւնները կարեւոր դեր են խաղում հայ մարդու, մանաւանդ նոր սերնդի, հայրենասիրական ու պահանջատիրական դաստիարակութեան մէջ: Այդպէս է ինչպէս հայրենիքում, այնպէս էլ սփիւռքում: Հայու պահանջատիրական գիտակցութիւնը ակամայ կը թուլանայ, եթէ նա ողջ հայութեան պատկանելու գիտակցութեան կողքին կը դադարի գիտակցելուց, որ ինքը նաեւ այնթապցի է, սասունցի, մշեցի, սիսեցի, պէլլանցի, երզնկացի եւ պատմական Հայաստանի այս կամ այն գաւառի բնիկ: Ինչքան էլ նա հեռու ապրի իր պատմական օրրանից, նա չի դադարում բնիկ լինելուց:

Հայկական Կիլիկիայի մի գողարիկ քաղաք է Պէլլանը՝ հայ հերոսական ազատատենչութեան խորհրդանիշ Մուսա լեռան գիւղերի հարեւանութեան: Ինչպէս բոլոր հայ պատմական բնակավայրերը, նա էլ ունեցել է իր հերոսական ազատագրական պայքարի պատմութիւնը: Նա էլ մշակել է հողը, կերտել եկեղեցի, դպրոց, տուն, գրադարան ու զարգացրել իր տնտեսութիւնը: Դիմագրաւել է ու յաղթել թուրքական ցեղասպանութեան ալիքը: Բայց ստիպուած, արցունքը աչքին, թողել իր պայքանական հողերը խաղաղ օրերին, երբ Անգլիան ու Ֆրանսան Ալեքսանտրետի

Սանճաք նահանգը կաշառք տուին Աթաթուրքի թուրքիային, որպէսզի այն չզիջուկի ֆաշական Գերմանիային: Սուրիան չմոռացաւ, որ այդ հողերը իր հանրապետութեան մաս են կազմել: Հայերը չմոռացան ու չեն մոռանում, որ դա Կիլիկեան հարստութեան մասունքն է: Այդ գիտակցութեան հիման վրայ սփիւռքում ու հայրենիքում ստեղծուեցին Պէլլանի հայրենակցական միութիւններ:

Երբ Հայաստանի պէլլանցիների մի ստուար խումբ հաւաքուեց Լոս Անճելոսում, նա քսան տարիներ առաջ հիմնեց տեղական Պէլլանի հայրենակցական միութիւնը: Դրա սեպուհ նպատակն է սփիւռքահայ նոր սերնդի գիտակցութեան մէջ կենդանի ու գործող պահել հայ պատկանելութեան ոգին, հայու պահանջատիրական ոգին, ամուր պահել կապը մայր հայրենիքի եւ սփիւռքի այլ պէլլանցիների հետ: Այս ոգով նա օգնում է հայրենի դպրոցներին, մշակութային կազմակերպութիւններին ու կազմակերպում գանազան միջոցառումներ, հաւաքոյթներ ու աւանդական ազգային ու կրօնական սոնամբուլներ: Միջոցառումներին մասնակցում են ոչ-պէլլանցի հարսեր, փեսաներ, ինամիներ ու հարեւաններ: Ամէն մի ձեռնարկ նախորդից աւելի կազմակերպուած ու մարդաշատ է դառնում: Ոգեւորիչ է այն, որ գնալով մեծանում է երիտասարդների բանակը:

Աւագ ու միջին սերնդի հայրենասիրական ու միասնական ոգին, նուիրուած ու ծրագրուած աշխատանքը, ապագայի նկատմամբ հաւատը ու լաւատեսութիւնը կազմակերպութեան ջանքն են ու առաջնորդող, կազմակերպող ուժը: Այս հողի վրայ գործակցում են հանրեր ու ճահէլներ, կանայք ու պարոնայք, պարմանուհիներ ու պարմաններ:

Քսան տարեկան է հայրենակցական գիտակցութեան ոգին մարմնաւոր Լոս Անճելոսի Պէլլանի հայրենակցական միութիւնը: Ծաղիկներ են բուսել նրա անցած լուսաւոր ճանապարհին:

բականութիւնը եւ շեշտեց, թէ հահաբեկչութեան դէմ պայքար յայտարարելէ առաջ նախընտրելի պիտի ըլլար փնտուել ահաբեկչութեան արմատները:

Շնորհանդէսին իր սրտի խօսքը արտասանեց «Ջոկատը, Որ Կոչուած էր Մեծն Մուրատ» գրքին հեղինակ, արձակագիր, հրատարակագիր, «Ոսկի Գրիչ» մրցանակի դափնեկիր Գրիգոր Զանիկեան: Պրն. Զանիկեան նախ շնորհակալութիւն յայտնեց Նոր Սերունդ Մշակութային Միութեան սոյն գնահատելի նախաձեռնութեամբ համար: Ան զգուշացուց ներկաները եւ առհասարակ հայ ժողովուրդը Յեղապանութեան ճանաչման ու հե-

տապնդման հանդէպ կրաւորականութենէ: Միաժամանակ, զգուշացուց թրքական հրէշային քարոզչութենէն, որ կը փորձէ հայութիւնը ներկայացնել իբրեւ ջարդարար, կը կառուցէ կեղծ նահատակներու յիշատակին յուշակոթոցներ: Պրն. Գրիգոր Զանիկեան թելադրեց չխաբիափիլ եւ մնայուն կերպով հակազդել թրքական քարոզչութեան:

Շնորհանդէսի աւարտին երեկոյին բոլոր խօսք առնողները հրաւիրուեցան բեմ՝ աւանդական օժումով «Թրջելու» գիրքը, որմէ ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, ինչպէս նաեւ գիրքի ազատ վաճառք:

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»
ՇՆՈՒՄՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ
CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ
(ԿԼԵՏԵՅԼ, ՊՈՐՊԵՆՔ, ԼԱ ՔՐԵՍԵՆՈԱ)
ԳԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՍԸ 10:00-11:00



MISSION LIQUOR & TOBACCO

Mix & Match Specials

 <p>Imperia Russian Vodka \$ 19.99 750ml</p>	 <p>Absolut Vodka \$ 13.99 750ml \$ 25.99 1.75L</p>	 <p>Grey Goose Vodka \$ 20.99 750ml \$ 49.99 1.75L</p>	 <p>Skyy Vodka \$ 9.99 750ml \$ 19.99 1.75L</p>
 <p>Pravda Vodka \$ 18.99 750ml</p>	 <p>Smirnoff Vodka \$ 8.99 750ml \$ 14.99 1.75L</p>	 <p>Cristall Vodka \$ 10.99 750ml</p>	 <p>Belvedere Vodka \$ 21.99 750ml</p>
 <p>Ora Blue Vodka \$ 15.99 750ml <i>Product of France</i></p>	 <p>Moskovskaya Vodka \$ 5.99 750ml</p>	 <p>Level Vodka \$ 19.99 750ml <i>Premium Vodka</i></p>	 <p>Stolichnaya Vodka \$ 13.99 750ml \$ 19.99 1.75L</p>
 <p>Stolichnaya Elit Vodka \$ 44.99 750ml</p>	 <p>Ketel One Vodka \$ 17.99 750ml</p>	 <p>Johnnie Walker Black Label \$ 20.99 750ml \$ 49.99 1.75L</p>	 <p>Johnnie Walker Red Label \$ 15.99 750ml \$ 28.99 1.75L</p>
 <p>Dewar's 12 Yr Scotch \$ 16.99 750ml</p>	 <p>Hennessy Cognac VS \$ 21.99 750ml VSOP \$ 30.99 750ml</p>	 <p>Courvoisier VS Cognac \$ 18.99 750ml</p>	 <p>Chivas Regal 12 Yr Scotch \$ 19.99 750ml \$ 44.99 1.75L</p>
 <p>Don Julio Añejo Tequila \$ 38.99 750ml</p>	 <p>Don Julio 1942 Tequila \$ 94.99 750ml</p>	 <p>Sauza Tres Generaciones \$ 26.99 750ml <i>Anejo Blanco Reposado</i></p>	 <p>1800 Tequila \$ 16.99 750ml \$ 18.99 1.0L</p>
 <p>Patron Silver Tequila \$ 35.99 750ml</p>	 <p>Sauza Gold Tequila \$ 18.99 1.75L</p>	 <p>Patriot Vodka \$ 12.99 750ml</p>	 <p>Louis XI XO Brandy \$ 17.99 750ml</p>

1801 E. Washington Blvd., Pasadena, CA 91104
Liquor (626) 794-7026 • Tobacco (626) 797-0500
 Corner of Allen & Washington • Open Monday—Saturday 9 am - 8 pm
www.missionliquor.com

*Minimum 12 Bottle Mix & Match • This ad expires on 05/09/06 • We reserve the right to limit quantities • Sales tax excluded • Prices subject to change without notice • No checks or credit cards

ՇՈՒԾԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՏԱՐԵՂԱՐՁԻՆ ԱՌԹԻ

Շարունակում էջ 5-էն

պատերազմից յետոյ մի ամբողջ համակարգ աշխատեց ազատամարտիկների շերտի վրայ, կաշառելով, սպառնալով, փչացնելով: Նրա հաւաստիացմամբ, այսօր կան նախկին կռուողներ, որ վերջնականապես փչացել են, «թէկուզ Աստուած իջնի երկնքից», ասում է Արմէն Եղեանը: Նա փաստում է, որ կամաւորականների զգալի մասը չդիմացաւ ապարատի ճնշմանը: «Լաւագոյն շերտի մի մասը, եթէ չհասնէ ամբողջութեամբ, այս դաշտն էլ իրենն է, հասարակական քաղաքական դաշտը: Պատերազմից յետոյ ինքը այդ դաշտում էլ պիտի դրսևորուէր: Հիմա տեսէք, այսօր, յատուկ, պատերազմի մասնակից օրինակելի զինուորական, այսօր չիմուլնիկական դաշտում չկայ: Կան, շատ կան, բայց խօսքը իսկական նուիրեալի մասին է», ասում է Արմէն Եղեանը: Նրա կարծիքով, եթէ պետութիւնը լինէր առողջ, ապա պէտք է օգտագործէր կամաւորականներին:

Այդ իմաստով Արմէն Եղեանը թերեւս մի փոքր սխալում է: Պետութիւնն օգտագործեց կամաւորականներին, նրանց դարձնելով ընտրակեղծարար, հասարակութեան գլխին մահակ, կալուածատէր, ֆեոդալ: Կեանքի անարդարութիւնները, անօրինականութեան, բարոյալքման համար պատասխանատուներն ու նաեւ խթանողները հենց դժգոհ ազատամարտիկների բաւական գոհ մարտնչներն են, որոնք յաճախ անօրինականութիւնն անում են հենց կամաւորականի վահանի պաշտպանութեամբ:

Արմէն Եղեանը յոյս է չափում, որ այնուամենայնիւ իրական նուիրեալները կը կատարեն արդարութիւն հաստատելու իրենց առաքելութիւնը: Բայց այդ դէպքում, նրանք ինչ են անելու արդարութիւնն ու օրէնքը մոռացութեան տուած իրենց մարտնչներին հետ, ովքեր այժմ տեղաւորուել են Հա-

յաստանի ռազմական, նաեւ քաղաքական իշխանութեան ամենաբարձր դիրքերու: Ինչ են անելու նրանց հետ՝ պատժելու՞ են, ներելու՞ են, թէ՞ դարձի են բերելու: «Խնդիրը էլի ոնց որ օրակարգային է, էլի ոնց որ պատասխան է պահանջում: Ըստ էութեան այս խաւը պէտք է աւելի լրջանայ, ինքն իր պատասխանատուութիւնը որոշակիօրէն հիմա զգում է: Այդ ժողովրդի պահանջը, իրեն ծառայելու, ներկայացնելու, մենք զգում ենք, որ դա մեզ վրայ է: Մենք սա, ինչ ասեմ, ծայրայեղ բառ չեմ ուզում օգտագործել, բոլոր միջոցներով մենք սա պէտք է գտնենք, իրականացնենք: Սիրով կը լինի, խղճողութեամբ կը լինի եւ այլն, եւ այլն: Բայց սա մեր խնդիրն է, մենք պէտք է երկիրն առողջացնենք: Երկիրն առողջացնել նշանակում է ամէն մէկին դնել իր տեղը», ասում է Արմէն Եղեանը:

Նրանից աւելի յստակ ու կտրուկ է Արմէն Աւետիսեանը, ով ՀԱԲ-ի կազմում կռուելուց յետոյ, այժմ Հայ Արիական Միաբանութեան կազմում է: «Պատիժը, եթէ խօսում ենք, պարտադիր չէ, որ դա պէտք է հենց տեղում գնդակահարութիւնը լինի, բայց այդ պէտք է պատժուեն: Պէտք է պատժուեն, որովհետեւ մեր յաղթանակը, բարոյական, հոգեբանական, ռազմական յաղթանակը, իսկապէս ստորացում է: Միայն սրա համար, որ ազատամարտի այն հիմնական տղաները, որ իրենց զգում են նուաստացած, իրենց ընտանիքները չունենն աշխատանք, իրենց երեխաները չեն կարողանում կրթութիւն ստանալ, իսկ այդ միւսների երեխաները եւրոպաներում ու չզիտեմ որտեղ են կրթութիւն ստանում, միայն դրա համար, որ այդ տղաները նուաստացած են, որ նրանց երեխաները չեն կարողանում իրենց հայրերի ազատագրած հայրենիքում լաւ ապրել, պէտք է պատժուեն», ասում է Արմէն Աւետիսեանը:

«ԼՐԱԳԻՐ» Երեւան

ՈՉ ԵՄ Է ՐԱՅ ԳԻՐԻ, ԳԱՂԱՓԱՐԻ ՈՒ ԼԻՆԵԼԻՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՊԱՆ՝ ԸՐԱՆԴ ԳԱՆՎՈՐՈՒՆԻՆ

Շարունակում էջ 1-էն

Գանգրունի օգտուելով հնչակեան տեսարաններ Սեդրակ Շահեմի, Լեւոն Մարտիրոսեանի, Սիրվարդի, ինչպէս եւ հայրենի պատմաբաններ՝ Փրօֆ. Արամայիս Մնացականեանի, Ճոն Կիրակոսեանի, Յովհաննէս Իննիկեանի, Հրանդ Աւետիսեանի եւ այլոց պատմագիտական գործերէն՝ իր ընթերցող հասարակութեան մատչելի դարձուց օսմանեան բոնատիրական կարգերու գործընթացը, Եղեանի ներքին ծալները, հայ Դատի հետապնդման աշխատանքներում օգտակար դառնալու կերպերը: Այդ առնչութեամբ՝ Գանգրունի լոյս ընծայեց շարք մը աշխատասիրութիւններ. «Հայաստան 1918 եւ Հայ Գաղափարական Միութիւնը», «Հայաստան 1920-1921 եւ Միջազգային Դիւանագիտութիւնը», «Կիլիկիոյ Հայութեան Վերջին Գաղթը», «Դաշնագիրները Դաւեցիի Հայոց», «Ցեղասպան Իթքիատը», «Հայ Դատի Պատմութիւն», եւ կարգ մը հոգեբանական բովանդակութեամբ փորձեր: Գանգրունի ազգային, ընկերային եւ բաղաձայն ամբողջ վարձագիծը կը կազմէր օսմանեան թուրքիոյ կողմէ հայոց դէմ կատարուած ցեղասպանութեան միջազգային նախապայմանները, թուրքիոյ դատապարտման ու թուրքիոյ կողմէ բռնագրաւուած հողերը անոր իրաւատէր հայ ժողովուրդի վերադարձնելու հրամայականը: Որպէսզի իրականացար մեր ազգային այս երազը, անհրաժեշտ էր ազգովին բոնցֆանայ, միասնակալ, գործել համախորհուրդ, համահունչ՝ բան մը, որուն արգելք կը դառնային հատուածական շահեր: Գանգրունի, հիմնուելով մեր անցեալի պատմութեան վրայ, կ'աշխատէր փաստել, թէ կարելի չէ ապաւինիլ միջազգային դիւանագիտութեան, օտարներու լորձնաշուրթին խոստումներուն:

Հ.Մ.Մ.-եան մեծ ընտանիքը, որուն «Կայծ» ամսագրին փոխխմբագիրը եղաւ Հրանդ Գանգրու-

նի, այսօր, նոյնպէս, կը սգայ անոր դառնադէտ մահը:

Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը կը սգայ կորուստը իր հիմնադիր անդամներէն Ընկ. Հրանդ Գանգրունիի, որ մաս կազմեց իր գրական օրկանի՝ «Արարատ Գրական» խմբագրութեան, որուն բերաւ իր հետեւողական ու շահեկան աշխատակցութիւնը իբրեւ խմբագիր, արձակագիր եւ գրաքննադատ:


Կը սգայ՝ հայ դպրոցը, որուն սպասաւորը հանդիսացաւ ան մինչեւ իր հանգստեան կոչուելը. իբրեւ ուսուցիչ՝ ան պաշտօնավարեց Պէյրութի Բաղաձայնի Սահակեան Բարձրագոյն վարժարանի - յետագային Սահակեան Գոյէն-ինչպէս նաեւ, Սահակ Մեսրոպեան եւ Ազգային Ռոբինեան վարժարաններու մէջ: Գանգրունիի կապը իր սաներուն հետ, առաւելաբար պարզ, ջերմ ու ընկերային էր Բան իբրեւ ուսուցիչ, կը սիրէին զինք իր սաները, մեծէն՝ փոքրը:

Նաեւ, Գանգրունի գրող էր: Մշակեց գեղարուեստական արձակ գրականութիւն: Ան երկնեց՝ «Մահաբաններ», «Շրթաներ», արշալոյսէն Առաջ՝ եւ «Ժամադրութիւնը Չյարգեց» պատմուածքներու հատորները եւ «Մեր մար», եւ «Ընկ. Գերասիմ Նոր Աշխարհի Մէջ» վէպերը:

Աւելի քան 20 գիրքերու հեղինակ՝ Ընկ. Հրանդ Գանգրունի իր բովանդակ հասարակական կեանքի սպաս դրաւ իր գաղափարական մեծ Ընտանիք՝ Մ.Գ.Ննչակեան Կուսակցութեան, իր ժողովուրդի ազգային ձգտումներուն նուիրագործման եւ տոհմիկ դաստիարակութեան՝ հայ նոր սերունդներու, որոնց ջամբեց ազգային պատկանելիութեան հպարտութիւն. ջամբեց սէր, հաւատարմութիւն, նուիրում՝ հանդէպ իրենց մշակոյթին, պատմութեան, ազգին ու հայրենիքին:

Շատ սիրելի Հրանդ, բող բեքե գայ վրադ հողը, որուն վրայ պիտի անպայման ծաղկին Բու սերմանած բաղդորոշ հունտերը:

ՄԱՆԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ



ԱՐԵՎ ԼԵՐԱՆ ԵՏԻՆ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ ԱՌԱՍՊԵՆ ԵՒ ԻՐԱՎԱՆՈՒԹԻՒՆ

ՂՅԱ ՂՄԱԳՂ ՄԻԱՍՈ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
Սահակ Թութճեանի
«ԱՐԵՎ ԼԵՐԱՆ ԵՏԻՆ»
Հայրենական
Օրագիրը

Ստանալու համար
դիմել հեղինակին՝
Հեռ. (818) 563-6174

կամ հետեւեալ
գրախանութիւնները
Կլէմտէյի մէջ
Ապրիլ՝ (818) 213-4112
Պերմ՝ (818) 244-3830
Սարգսապատ՝
(818) 500-0790

ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ) ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԸՆՈԱԶԱՅՆԵԼ
(626) 797-7680
(626) 398-0506

ՔԱԶ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 11:00-ից 1:00

Կլէմտէյի 26-րդ կայանից

Չեր Ծանուցումները վատահեցէք «Մասիս» շաբաթաթերթին

ԻՏԱԼԻՈՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շաբաթական ԷՁ6-ԷՁ

տեւի Սպանիոյ օրինակին եւ պահանջէ իտալական գորքերու իրաքէն քաշուելը անմիջապէս եւ կամ Ուաշինթընի հետ լեզու գտնելու փորձ ընէ, իր դաշնակից համայնավարները կրնան հակառակիլ իրեն: Այս վերջինները դէմ են քափիթալիստական, դրամատիրական, աջակողմեան տնտեսական դրութեան մը, որուն ջերմ ջատագովն էր Սիլվիո Պերլուսոնի, եւ Ֆրանսայի նախագահ Ժակ Շիրաքի նման, դէմն են Ամերիկայի:

Իտալիան պէտք ունի Ամերիկայի բարեկամութեան, եւ ուրեմն, Փրո-

տի կրնայ նշանակել արտաքին գործերու նախարար մը որ սիրուած ըլլալ Ուաշինթընի կողմէ, եւ կամ ընդունուած Պուշի իշխանութեան: Իր կառավարութեան նշանակումէն առաջ, Պրն. Փրոտի պէտք է ընտրէ երկրին նոր նախագահը, եւ Սենատի եւ Ներկայացուցիչներու տան դեկավարները: Ասոնց նշանակումներէն կարելի է գաղափար մը կազմել թէ ի՞նչ ուղղութեամբ պիտի ընթանայ Փրոտիի իտալիան: Ներկայիս Փրոտիի ընտրութիւնը տեղի կ'ունենայ ընտրական ձայներու փորձիկ մեծամասնութեամբ մը, եւ առաջին ձախողութեան իսկ, իտալիան կրնայ նոր ընտրութիւններ ունենալ:

ՎԱՐԱՆ ԶԱՍԵԱՆ Կ'ԱՐԺԱՆԱՆԱՅ ELLIS ISLAND ՇՔԱՆՉԱՆԻՆ

Շաբաթական ԷՁ17-ԷՁ

Սակայն, որպէս բոլորին ծանօթ արձանագրուած իրողութիւններ, ես այստեղ պիտի յիշեմ վահան Շամլեանի կողմէ կատարուած բարերարութիւնները: Այսպէս՝ յիշեմ իր կողմէ կատարուած բարերարութիւնները: Սկսինք ամերիկեաններէն: Այսպէս՝

Salvation Army - Փրկութեան Բանակ, որուն ունեցած օգուտները, կատարած բարեգործութիւնները բազմամիլիոն տոլարներու կը հասնին, և որուն համար արժանացած է Salvation Army-ի THE OTHER բարձրագոյն շքանշանին:

Տասնամեակներ շարունակ իր ու կնոջ՝ Անոյ ղի անուանով կատարուած հարիւր հազարաւոր տոլարներու համող նուիրատուութիւններով մասնակցած է Ֆրեզնոյի Valley Children's Hospital-ի՝ "Toys for Tots" հանգանակութիւններուն:

Մնայուն կերպով զօրավիղ եղած է Fresno Philharmonic Orchestra-ին:

Մնայուն կերպով, շօշափելի նուիրատուութիւններով սատարած է Fresno Metropolitan Museum-ին:

1970-էն ի վեր անդամ է Ֆրեզնո Գառնիթիի

Ծրագրաւորումի Յանձնաժողովին (Planning Commissioner of Fresno County):

Անդամ՝ International Association of Wiping Cloth Manufacturers-ի:

Անդամ՝ International Sleep Products Association-ի (ISPA):

Հայկական բարեգործութիւնները.

Բարերար՝ Վահան և Անոյ Շամլեան վարժարանի, Կլէնտէյլ, Գալիֆորնիա, որուն համար արժանացած է Ազգային Բարերար կոչումին:

Բարերարներէն մէկը՝ Ֆրեզնոյի հայկական վարժարանին:

Բարերար՝ Ս. Էջմիածնի հանրակացարանին:

Կնքահայր՝ Ս. Էջմիածնի Միւռնոսի հիմնադրութեանց (1996):

Յկեանս անդամ և բազմիցս նուիրատու՝ Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միութեան (Հ.Մ.Ը.Մ.):

Յայտնի և անյայտ իր բազմաթիւ նուիրատուութիւններուն համար, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս, երջանկալիշատակ Գարեգին Բ. Սարգիսեանի կողմէ արժանացած Կիլիկեան Իշխանի շքանշանին:

Ամենայն Հայոց Կաթողիկոս, երջ. Գարեգին Ա. Սարգիսեանի

կողմէ արժանացած Ս. Գրիգոր Լուսաւորչի մետալին:

Հայաստան Համահայկական Հիմնադրամի տարեկան Թեյլթոններուն նուիրած է կէս միլիոն տոլար:

Հայաստանի Հանրապետութեան և Արցախի մանաւանդ գինուորական կարիքներուն բերած իր նպաստը կը հասնի հարիւր հազարաւոր տոլարներու:

Տիկ. Անոյ Շամլեան, որ 35 տարիներ անդամ եղած է Ֆրեզնոյի Հայ Օգնութեան Միութեան Սօֆիա մասնաճիւղին, վահանի համամտութեամբ ու խրախուսանքով, թէ՛ աշխատած և թէ՛ զգալի նուիրատուութիւններ կատարած կանացի բարեսիրական այս մեծ կազմակերպութեան:

Ալ չեմ խօսիր, երկար տարիներու ընթացքին հայկական զանազան հայրենակցական միութիւններուն կատարած իր նուիրատուութիւններուն մասին:

Վ. Շամլեանի բարեգործութիւններուն մասին, Կլէնտէյլի նախկին քաղաքապետներէն Լէրի Չարեան, տարիներ առաջ հետեւեալը կ'ըսէր. «Աշխարհը շատ աւելի տանելի տեղ մը պիտի ըլլար՝ եթէ հարուստ մարդիկ ըլլային այնքան վեհանձն ու հոգածու, ինչպէս վահան Շամլեանը»:

Քիչ առաջ, երբ կ'ակնարկէի ջերմածնութեամբ տարբադադրուած և հեղուկացուած փլաստիքը ճարտարաբանութեան մէջ օգտագործելով նոր բիզնես սկսելու Շամլեանի նախաձեռնութեան մասին, իր շեշտին մէջ զգալի էր՝ յաջողութեան պարագային ազգին ու հայրենիքին նոր նուիրաբերումներով օգնելու լռելեայն ցանկութիւն մը:

Ի՞նչ կը մտածէ վահան Շամլեան Ամերիկայի, Հայաստանի և Հայ Սփիւռքի մասին: «Ամերիկան սքանչելի երկիր է, բայց այս վերջին հինգ տարիներու իր ընթացքը մտահոգիչ է, կ'ըսէ ան: Հայաստանը մեր փրկութեան վերջնական հանգրուանն է: Բայց հայուն բարոյական նկարագիրը խաթարուած է այնտեղ: Պէտք է վերականգնել զայն: Իսկ Սփիւռքին առջեւ կայ մէկ հրամայական... Միասնականութիւն: Միայն միասնականութեամբ և այդ ոգիով դաստիարակուած նոր սերունդներ պատրաստելով, աթոռները անոնց յանձնելու մէջ է հայուն փրկութիւնը Սփիւռքի մէջ»:

Ահաւասիկ կարելի ընդհանուր պատկերը վահան Շամլեան մարդուն, հայուն, ամերիկացիին, գործարարին ու բարերարին:

ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ

ԳՐԻԳՈՐ ԼԱՉԻՆԵԱՆԻ մահուան առթիւ հետեւեալ անձերը փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններ կատարած են Հ.Մ.Մ.ին:

Table with 2 columns: Donor Name and Amount. Includes names like Տէր և Տիկ. Վիգէն և Սալբի Մանկրեան \$300, Տէր և Տիկ. Սեդրակ և Ալին Աճէմեան \$100, etc.

ՇՆՈՐԱԿԱԼԻՔ

Լաչինեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց որոնք իրենց ներկայութեամբ, հեռաձայնով, փոխան ծաղկեպսակի նուիրատուութեամբ մասնակից եղան իրենց հօր, աներին եւ հարազատին հանգուցեալ ԳՐԻԳՈՐ ԼԱՉԻՆԵԱՆԻ սուգին:

Այս առիթով յատուկ շնորհակալութիւն կը յայտնեն Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաք. Եկեղեցւոյ հովիւ՝ Արժ. Տ. Զաւէն Աւ. Քհնյ. Արքու.մանեանին, Հոգ. Տ. Ասպետ Վրդ. Պալեանին, Եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ Հ.Մ.Մ.ի Շրջանային վարչութեան:

Small table with 2 columns: Amount and Recipient. «Մասիս» շաբաթաթերթին \$300, Հ.Մ.Մ.ին \$700

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year) * \$50,00 for USA * \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada. * \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: Address: City: State: Zip Code: Country: Tel: Fax:

Http://www.massisweekly.com

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION



*Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ:
Proud Past, Exciting Future.*



Հ.Բ.Ը. Միութեան Հարաւային Գալիֆորնիոյ Շրջանակային Յանձնաժողովը կը յայտարարէ հարիւրամեակի Կալա-ճաշկերոյթ, տօնելու համար Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան պանծալի տարեդարձը:

ՀԲԸՍ ԸԱՐԻՒՐԱՄԵԱԿԻ ԿԱԼԱ- ՃԱՇԿԵՐՈՅԹ

ՆԱԽԱԳԱՐՅՈՒԹԵԱՄԲ՝ ՌԻՉԸՐՏ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԲԱՆԱԽՕՍ՝ ՊԵՐՃ ՍԵՂՐԱԿԵԱՆ

ՆԱԽԱԳԱՐ Հ.Բ.Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

ՀԱՆԴԻՍԱԿԱՐՆԵՐ՝

ԷՐԻՔ ԿԱՐՍԵԹԹԻ

ԹՈՐՈՍ ԵԹԵՆԵՔԵԱՆ

ՆԱԽԱԳԱՐ ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ԲԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

Հ.Բ.Ը. ՀԱՐԱՄԱՅԻՆ ԳԱԼԻՖՈՐՆԻՅՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՅՈՒՆԻՍ 17, 2006

Universal Hilton Hotel Պանդոկին մէջ:

Յաւելեալ տեղեկութեանց համար հեռաձայնել ՀԲԸՍ-ի գրասենեակը՝
(626) 794-7942 կամ գրել՝ annette@agbuca.org

ԿԻՊՐՈՒՆ 100 Կ-ՊՇԵՂ